Կույս Մարիամ. Ոչ մեկը չի խոչընդոտի Ճշմարտության Գրքի բացահայտումն աշխարհին

Չորեքշաբթի, 1 փտրվարի, 2012թ, երեկոյան ժ 08:15

Զավակս, երբ աշխատում ես Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի համար, դու պետք է միշտ հնազանդ լինես:

Երբեք քննության մի ենթարկիր Նրա Սուրբ Խոսքը, որովհետև Նա **խոսում է ճշմարտությունը և միայն ճշմարտությունը:**

Իմ զավակներից այնքան շատերն են քննության ենթարկում Նրա ասած յուրաքանչյուր խոսքը սկզբից ի վեր: Յուրաքանչյուր մարդու համար, ով ենթարկվում է Նրա Սուրբ Խոսքին այնպես ինչպես այն պարունակվում է Իմ Հոր Գրքում, յուրաքանչյուրի համար միշտ կա մեկ ուրիշը, ով այլ կերպ է մեկնաբանում Նրա խոսքերը:

Դու պետք է անես ամեն ինչ, որ խնդրվում է քեզնից Իմ Որդու ղեկավարության ներքո: Երբեք տեղի մի տուր նրանց, ովքեր կպատահնջեն, որ Նրա խոսքերը հարմարեցվեն իրենց մեկնաբանություններին:

Շարժվիր հիմա զավակս, արագությամբ, որ տանես Իմ Որդու կողմից աշխարհին տրված պատգամները փրկելու համար կորած մեղավորներին:

Իմ Որդու նպատակը մեկն է. այն է՝ փրկել հոգիներ:

Չվախենաս, զավակս, որովհետև այն ամենն, ինչ Իմ Որդին ասում է քեզ, չի հակասում երկրի վրա Նրա ամենասուրբ եկեղոցու ուսուցումներին:

Իմ զավակներին Նրա տված ընծաները չափազանց յուրահատուկ են, և տրվում են այս վերջին ժամանակներում բոլոր հոգիներին:

Իմ Որդին այնքան առատաձեռն ու գթառատ է, որ Նա ցանկանում է մեղավորների վրա հեղել առանձնահատուկ շնորհներ, որպեսզի ապահովի նրանց փրկությունը:

Ով էլ որ փորձի կանգնեցնել Իմ Որդուն Իր Երկրորդ Գալուստի համար աշխարհին նախապատրաստելու Նրա առաքելության մեջ, կկանգնեցվի Իմ Հոր Ձեռքով:

Այս աշխատանքը, **Ճշմարտության Գրքի բավահայտումը մինչ կնիքները կբացվեն,** Իմ Հոր համար ամենակարևոր առաքելություններից մեկն է երկրի վրա:

Աշխարհին խոստացվել է ճշմարտությունը այս ժամանակ:

Բոլոր հոգիներին, հավատացողներին և չհավատացողներին, պետք է ասվի ճշմարտությունը, որովհետև նրանք այնքան են հեռացել եկեղեցուց, որ այն պետք է տրվի նրանց այս ձևով:

Բոլոր հրեշտակներն ուղարկվել են երկիր պաշտպանելու համար մարդկությանը խաբեբայից և հավիտենական ճշմարտության վերաբերյալ նրա տարածած ստերից:

Մարդկությունը չի ցանկանա լսել ճշմարտությունը, և շատ արգելքներ կդրվեն քո առջև, զավակս, սակայն դա անօգուտ կլինի:

Ոչ մեկը չի խոչընդոտի ճշմարտության Գիրքն աշխարհին բացահայտելու, քանի որ եթե նարանք փորձեն դա անել, Իմ Հոր զորությունը կսանձազերծվի **Երկնքից կրակի բոցերի պես:**

Զավակս, երբեք մի կասկածիր քեզ տրվող այս պատգամներին:

Երբեք ոչ մի բառ մի փոխիր հարմարվելու համար նրանց, ովքեր փորձում են քեզ ստիպել փոփոխել Աստծո խոսքը:

Միայն մեկ տեր կարող է լինել, և դա Աստվածն է Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով:

Գնա հիմա այն համզվածությամբ, որի կարիքն ունես:

Հիշիր, որ Իմ Որդու կողմից տրվող այս պատգամները Աստծո բոլոր զավակների համար են, այլ ոչ միայն Նրա կաթոլիկ եկեղեցու, կամ Նրա ընտրյալ ժողովուրդ հրեաների: Նրանք բոլորի համար են:

ԻմՀայրը հավասարապես սիրում է յուրաքանչյուր հոգու: Ոչ մի հոգի ավելի կարևոր չի համարվում մյուսից:

Ձեր Երկնավոր Մայր

Մայր Փրկության

Մի՞թե կարծում էիք, որ Ես կանտեսեմ ձեզ մինչև Դատաստանի Օրը

Հինգշաբթի, 2 փետրվարի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, որքան ուրախ եմ Ես Իմ հետևորդների արձագանքից՝ մեղքերի բացարձակ թողության ինդուլգենցիայի Իմ տված ընծայի վերաբերյալ:

Բայց որքան տխուր եմ Ես այն անշնորհակալ սրտերի համար, ովքեր մերժում են Իմ ընծան:

Այդ հոգիները չեն կարողանում հասկանալ, որ միայն Հայր Աստված կարող է թույլատրել այդ ամբողջական ինդուլգենցիան:

Կրևոր չէ, թե դա տրվել է Իմ կողմից, թե երկրի վրա Իմ Սուրբ Երեցի կղմից:

Կարևորն այն է, որ քիչ ժամանակ է մնացել մարդկության հոգիների փրկության համար:

Նրանք, ովքեր հարցականի տակ են դնում Իմ խոսքը, **իմ ացեք, որ այդ Ես եմ՝ ձեր Աստվածային Փրկիչը, ով խոսում է ձեզ հետ Երկնքից:**

Դուք չ՞ք ընդունում, որ Ես գոյություն ունեմ: Որ Ես ցանկանում եմ ձեզ պատգամ ուղարկել այս վերջին ժամանակներում:

Մի՞թե կարծում էիք, թե Ես կանտեսեմ ձեզ մինչև Դատաստանի Օրը: **Որ Ես չէի նախապատրաստի ձեր հոգիները՝ ձեզ հետ այս ձևով հաղորդակվելու միջոցով:**

Եթե հավատում եք Ինձ, ապա պետք է հավատաք աստվածային միջամտությանը: Իսկ եթե չեք հավատում, ապա դուք չեք բացել ձեր սրտերը:

Ինչպե՞ս իմանաք որ այդ Ես եմ:

Ես ձեզ խնդրում եմ նստել հիմա և խոսել Ինձ հետա ռաձնձին: Խնդրեք Ինձնից Սուրբ Հոգու շնորհը, և Ես անմիջապես կպատասխանեմ բաց և մաքուր հոիգներին:

Ցած դրեք ձեր զանքերը և թույլ տվեք Ինձ, որ ձեզ տամ այս յուրահատուկ ընծան:

Իմացեք, որ դուք Ինձ վիրավորում եք, երբմերժում եք Իմ ընծաները: Մի՞թե դա նշանակում է նաև, որ դուք կմերժեք Իմ գթասրտությունը:

Խոնարհեք ձեր գլուխները և ներողամտություն խնդրեք: Երբ Ինձ մոտ գաք խոնարհ երատագիտությամբ, Ես կլուսավորեմ ձեզ ճշմարտությունը:

Երբ բացեք ձեր աչքերը ճշմարտության հանդեպ, հասկացողության ձեր արցունքները դուրս կհոսեն, և սուք վերջապես Ինձ շնորհակալություն կհայտնեք, մեղքերի բացարձակ ոսղության մեծ ընծայի համար:

Ձեր Աստվածային Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ. Ատելությունն ատելություն է: Չկա երկու տեսակ: Նրանք նույնն են:

Շաբաթ, 4 փետրվարի, 2012թ, ատավոտյան ժ 10:09

Զավակս, չարիքն արագորեն տարածվում է աշխարհի որոշակի մասերում:

Մինչ պատերազմներ են ծրագրվում՝ հոգում եղած ատելությամբ, Սուրբ Հոգին, այդ նույն ժամանակ, աշխարհի տարբեր մասերում է հեղվում է մյուսների հոգիների մեջ:

Հոգիների մարտը սկսվել է: Բարին՝ չարի դեմ:

Իմ զավակները երբեք չեն ենթադրում, որ կարծրացած հոգի ունեցողները նրանք են, ովքեր հավատ չունեն կամ գաղջ են հավատով:

Իմ Որդուն՝ Հիսուս Քրիստոսին շատ կարեկից հավատացողներ հիմա կշջվեն գայթակղությունից:

Նրանց մտքերը կլցվեն կասկածներով, որը նրանց կկուրացնի Իմ սիրելի Որդու խոսքի հանդեպ, մինչ Նա կխոսի քո միջոցով աշխարհի հետ, զավակս:

Նրանց ատելությունը,երն նրանք շրջվեն Նրա Սուրբ Խոսքից, այնքան ուժեղ կլինի, որքան մարդասպանների կողմից իրենց զոհերին ցույց տրվող ատելությունը:

Ատելությունը գալիս է խաբեբայից:

Ստեր են տարածվում չարի կողմից, ով օգտագործում է թույլ հոգիներին ճշմարտությունը թուլացնելու համար:

Ատելությունն ատելություն է: Չկա երկու տեսակ: Նրանք նույնն են:

Այդ հավատարիմ հոգիների հպարտությունը հիմա կբորբոքվի, մինչ չարի կողմից մի վերջնական փորձ է արվում կանխելու համար աշխարհին տրվող այս ամենահրատապ պատգամները տարածվելուց:

Իմ Որդին Իր հավատարիմ հետևորդների աջակցության կարիքն ունի՝ երկրի վրա Նրա բանակը կազմելու համար: Այս բանակի արմատները կլինեն Նրա հավատարիմ հետևորդները:

Վստահ եղեք, որ առաջինը այս խմբի սրտերը կկարծրանան:

Հնարավոր չէ կարծրացնել այն հոգին, որն արդեն իսկ խավարի մեջ է: Ուստի լույսի մեջ գտնվող հոգիներին են, որ գայթակղության կենթարկվեն խաբեբայի կողմից:

Այդ ժամանակ նրանք ստեր կտարածեն, որ վիրավորեն Իմ Որդուն և ուշացնեն այս աշխատանքը:

Նրանք չեն հասկանա, որ դա պատահում է իրենց այն պատճառով, որ կարծում են, թե իրենց պարտականությունն է Իմ Որդու ճշմարիտ խոսքը տարածելը:

Իմ Որդու կողմից քեզ տրվող այս պատգամներում սխալներ փնտրելը, զավակս, կտանջի Իմ Որդուն:

Շուտով Նրա Եկեղեցու հենց հիմքը իր մեջքը կդարձնի Նրա հանդեպ: Նրանք կմերժեն Նրան և նորից կխաչեն Նրան:

Հպարտությունն արգելում է նրանց, որ բացեն իրենց աչքերն այն ժամանակ, երբ Նա (Հիսուսը) կանգնած է հիմա նրանց առջև սիրով և բաց բազուկներով:

Զավակս, Ես կոչ եմ անում որ Աստծո բոլոր զավակները միավորվեն որպես մեկ և կռվեն հոգիների փրկության համար:

Այնքան շատերը հիմա, զավակս, չեն լսում այս պատգամներին, բայց նախազգուշացման տեղի ունենալուց հետո նրանք կլսեն:

Աղոթիր, աղոթիր, աղոթիր այն հոգիների համար, ովքեր վիրավորանք, զրպարտություն և ստեր են տարածում քո մասին:

Ես հիմա քեզ կտամ աղոթքի խաչակրաց արշավանք (25) որպեսզի պաշտպանություն խնդրես այն բոլոր տեսանողների և նրանց համար, ովքեր ընտրված են Հայր Աստծո կողմից Նրա Սուրբ Խոսքը երկրի վրա տարածելու համար այս ժամանակներում:

Ով Ամենաբարձրյալ Աստված

Ես աղերսում եմ Քեզ՝ պաշտպանություն առաջարկոեու աշխարհում Քո բոլոր սուրբ պատգամատարներին

Ես աղոթում եմ, որ նրանք պաշտպանված լինեն ուրիշների ատելությունից

Ես խնդրում եմ, որ Քո Ամենասուրբ Խոսքն արագորեն տարածվի ողջ աշխարհում

Պաշտպանիր Քո պատգամատարներին զրպարտությունից, վիրավորանքից, ստերից և ամեն տեսակ վտանգներից

Պաշտպանիր նրանց ընտանիքները և ծածկիր նրանց միշտ Սուրբ Հոգով

Որպեսզի աշխարհին տրվող պատգամներին ուշ դարձնեն զղջացող և խոնարհ սրտերով:

Ամեն:

*Զավակս, **հպարտությունը բնավորության մի գիծ է, որն ամենից շատն է անհաճո Իմ Հոր աչքում:** Նրա համար ավելի ցավալի է, երբ հպարտության մեղքերը նվաճում են նվիրված և սուրբ հոգիների հոգիները, երբ նրանք մերժում են ընդունել այսօր Նրա պատգամատարների միջոցով աշխարհին տրվող Նրա Սուրբ Խոսքի ճշմարտությունը:*

*Նրանք պետք է խնդրեն ճշմարիտ զանազանության ընծան, որը միայն կտրվի Սուրբ Հոգու զորությամբ **խոնարհ հոգիներին, որ մաքուր սիրտ ունեն և զուրկ են հպարտությունից ու ամբարտավանությունից:***

Քեր Սիրող Մայր

Մայր Փրկության

Պատերազմները, որոնք ներգրավում են Իրանը, Իսրայելը, Եգիպտոսը և Սիրիան, փոխկապակցված են

Շաբաթ, 4 փետրվարի, 2012թ, առավոտյան ժ 10:55

Իմ սիրելի աղջիկ, քո հավատարմությունն Իմ հանդեպ փորձության է ենթարկվում ամեն օր: Այնքան շատերն են փորձում կանգնեցնել քեզ Ինձ համար արվող քո աշխատանքում, սակայն նրանք չեն կարող այդ անել Երկնքից քեզ տրվող Սուրբ պաշտպանության պատճառով: Նրանք, ովքեր փորձում են քեզ ցավ, տառապանք կամ վիրավորանք պատճառել, կպատժվեն: Ես թույլ չեմ տա այդպիսի գործողություն:

Հիշիր, կանխասացվել է, որ **ոչ մի մարդ չի կարող կանգնեցնել Իմ Սուրբ Հոգու կրակը,** որը դուրս կհեղվի Իմ ամենասուրբ պատգամներից ողջ մարդկության համար:

Ուստի Ես խնդրում եմ, որ դու շարունակես անտեսել քո առջև դրված խոչընդոտները և անտեսես ատելությունը, քանի որ այն գալիս է սատանայից:

Զբաղվիր ատելությամբ, և այն կտարածվի:

Անտեսիր ատելությունը, և այն կմեռնի, որովհետև չի կարողանա գտնել սնուդը սնվելու և ամրապնդվելու համար:

Հիմա Ես ցանկանում եմ, որ ասես Իմ զավակներին, որ **Հայտնության Գրքում կանխասացված իրադարձությունները հիմա տեղի են ունենում աշխարհում:**

Իմ զավակները չպետք է վախենան, ռովհետև **նրանց հավատը և աղոթքները կօգնեն նվազեցնելու պատերազմի, գենոցիդի, սովի և ուրացության ազդեցությունը:**

Պատերազմներ կսկվեն, որոնք կներգրավեն Իրանը, Իսրայելը, Եգիպտոսը և Սիրիան: Դրանք փոլորը փոխկապակցված կլինեն:

Նույնպես, **Իտալիան կտառապի այն փլուզումից, որը կապված կլինի կեղծ մարգարեի և նրա գործընկեր Հաքաքրիստոսի բարձրանալու հետ:**

Սրտանց աղոթիր, որ բոլոր երկրները չներքաշվեն **գլոբալ իշխանության տակ, որը կվերահսկի ձեր փողը:** Քանի որ եթե նրանք հաջողության հասնեն դրանում, չափազանց դժվար կլինի:

Աղոթիր Հայր Աստծուն, որպեսզի Նա կարողանա կանխել այդ վայրագությունները:

Ուրիշների հոգիների համար ասվող աղոթքը կփրկի ձեր սեփական հոգիները: Ես միայն դա եմ խնդրում՝ աղոթք:

Աղոթեք նաև դարձի համար:

Շուտով ամեն ինչ կհասկացվի, աղջիկս: Ամեն ինչ լավ կլինի, երբ նախազգուշացումից հետո դարձ տեղի ունենա:

Գնա հիմա և ասա Իմ զավակներին, որ երբեք չվախենան Իմ Խոսքը հռչակելուց: Ես կկանգնեմ նրանց կողքին:

Եթե նրանց ծաղրեն, ապա կարող են վստահ լինել Իմ այս ամենասուրբ խոսքի ճշմարտության հանդեպ:

Ձեր սիրող Հիսուս

Հայր Աստված. Աշխարհը կենթարկվի Երկնային պատժի – Իմ միջամտությունն անհրաժեշտ է

Շաբաթ, 4 փետրվարի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Աղջիկս, աշխարհը երկնային պատժի ենթարկվելու առջև է, որպես մարդկության կողմից սարսափելի մեղքի փոխհատուցում:

Չնայած այս Երկնային պատժի մեծ մասը կասեցվել է, **Իմ ձեռքը հիմա կիջնի այն չարության վրա, որը նյութվում է ամեն անկյունում:**

Այդպիսի մեծ ատելությունն Իմ՝ Հայր Աստծո հանդեպ, պետք է կանգնեցվի, այլապես Իմ զավակները կտառապեն ավելի մեծ սարսափից:

Հիմա Ես նախապատրաստում եմ աշխարհը այն փոփոխությունների իհամար, որոնք պահանջվում են երկիրը մաքրագործելու համար, որպեսզի այն համապատասխան լինի մարդկությանը փրկելու Իմ պլանի հետ:

Այնքան շատ հոգիներ են տառապանքի ենթարկվում մեղքի կողմից:

Ես ողջ արարչության Աստվածն եմ, և Ես ետ չեմ նստի և չեմ դիտի, թե ինչպես են Իմ զավակները ոչնչացնում միմյանց:

Աղջիկս, մի չար պլան կա՝ մարդկության մեծ մասին պատերազմի միջոցով ոչնչացնելու համար:

Այդ պատերազմները պատահական չեն:

Տեսե՞լ ես, թե որքան շատ պատերազմներ են տեղի ունենում այդքան շատ ազգերի մեջ ամենուր:

Սա **Հակաքրիստոսի ձեռքով է, ով համբերությամբ սպասում է երկրի վրա իր փառքի պահին:**

Նա, երբ ազգերը ծնկի գան, ներս կմտնի և **կստեղծի մի կեղծ դիվային խախաղություն՝ պատրաստված իր կողմից:** Սա կլինի խաբեության դիմակ:

Իմ պատիժը կսանձազերծվի այն ազգերի վրա, ովքեր կմասնակցեն այդ մեծ խաբեությանը՝ վերահսկելու աշխարհը ազգերին զավթելու միջոցով:

Ուժեղ եղիր, աղջիկս, այս շրջանում, **երբ երկիրը կցնցվի, այն երկար չի տևի:** Դա անհրաժեշտ է Իմ զավակներին արթնացնելու համար:

Նրանք, Իմ զավակները, նախազգուշացվել են, **բայց Իմ ձայնը դուր չի եկել:**

Իմ խեղճ զավակները, ովքեր ապրում են բարի կյանքով և տարակուսանքով դիտում աշխարհում գոյություն ունեցող չարիքին, պետք է **հասկանան, որ Իմ միջամտությունն անհրաժեշտ է:**

Եթե Ես չկանգնեցնեմ այն, ինչ տեղի է ունենում, ապա մարդկության մեծ մասը կոչնչանա:

Աղոթեք, որ Իմ զավակներն **աղոթեն ձեր երկրներում խաղաղության համար:**

Երբեք մի վախեցիր Իմ Խոսքը հռչակելուց, եթե նույնիսկ հալածանքի ենթարկվես: Քանի որ նույնիսկ մեկ հոգին, ով բարձրաձայն հայտնում է իր հավատը, բավական է հարյուրավոր դարձերի համար:

Գնա խաղաղությամբ: Եկել է ժամանակը, որ Ես՝ Հայր Աստված, թույլատրեմ կնիքների բացումը: Միայն այդ ժամանակ մարդկությունը կընդունի, որ ինքն անուժ է:

Նրանք չեն վերահսկում աշխարհը, քանի որ այդպես լինել չի կարող:

Միայն մարդկության Արարիչն ունի զորություն սատանայի վրա, և հիմա Ես կսանձազերծեմ մի պատիժ այն սառը սրտերի և խավար հոգիների վրա, ովքեր իրենց հավատարմության երդումն են տվել նրան (սատանային):

Հիմա կսկսվեն մաքրագործման վերջին էտապները:

Հայր Աստված

Կույս Մարիամ. Երբ աղոթում եք Վարդարանը, կարող եք օգնել փրկելու ձեր ազգը

Կիրակի, 5 փետրվարի, 2012թ, ցերեկվա ժ 01:15

Զավակս, Ես կոչ եմ անում Իմ բոլոր զավակներին **որ պեսզի աղոթեն աշխարհում միասնության համար այս ժամանակ:**

Հավատն Իմ Որդու հանդեպ անհետանում է, և Իմ զավակները մնում են անպտուղ հոգիներով:

Ես ձեր Անապական Սիրտն եմ, և ՀԻսուս Քրիստոսի՝ Իմ թանկագին Որդու հանդեպ ունեցած սիրո միջոցով կաշխատեմ Նրա հետ միասին՝ փրկելու համար մարդկությունը:

Միջամտելու համար Ինձ աղոթելով **Ես կխնդրեմ Իմ Հորը՝ Ամենաբարձրյալ Աստծուն, որ Իր արդարադատության ձեռքը ետ պահի այն դաժան պատժից, որը Նա կհեղի երկրի վրա,** որպեսզի կանգնեցնի չարությունը տարածվելուց:

Ես կօգնեմ ձեզ, զավակներս, որ ավելի մոտենաք Իմ Որդու սրտին: Երբ մենք միասին ենք աշխատում, զավակներս, կարող ենք կասեցնել աղետներն աշխարհով մեկ:

Երբեք մի մոռացեք Իմ ամենասուրբ Վարդարանի կարևորությունը, որովհետև երբ դուք այն ասում եք ամեն օր, դուք կարող եք օգնել փրկելու ձեր ազգը:

Սատանայի ուժը թուլանում է, երբ դուք ասում եք Իմ Վարդարանը: Նա հեռու է փախչում մեծ ցավով և դառնում է անուժ: Չափազանց կարևոր է, անկախ նրանից, թե ինչ քրիստոնեական հավատի եք պատկանում, որ ասեք Վարդարանը առնվազն օրական մեկ անգամ:

Այնքան շատերը չեն ընդունում Ինձ՝ իրենց Օրհնյալ Մորը:

Ինչպես Իմ Որդուն, **Ինձ մերժում են, վիրավորում, արհամարհում անդ նվաստացնում:** Սակայն եթե նրանք խնդրեն Իմ օգնությունը, Ես կարող եմ հոգիներին բերել ուղիղ դեպի Իմ Որդի Հիսուս Քրիստոսի Սուրբ Սիրտը:

Իմ Որդին՝ Հիսուս Քրիստոսը, ձեր փրկիչն է, զավակներս, և Նա երբեք չի մերժի մեղավորներին, անկախ նրանից, թե որքան սևացած են նրանց հոգիները:

Եթե վշտացած եք Նրան վիրավորած լինելու համար, պարզապես կանչեք Ինձ՝ ձեր սիրող Մորը, և Ես ձեր ձեռքից բռնած կտանեմ Նրա մոտ:

Իմ Որդին նախապատրաստում է, որ գա հավաքի Իր բոլոր զավակնրին, այնպես որ դուք բոլորդ կարողանք միանալ Նրան երկրի վրա Նոր Դրախտի մեջ: Միայն մաքուր և խոնարհ հոգիները կարող են մտնել:

Դուք պետք է սկսեք ձեր նախապատրաստությունները հիմա: Սկսեք՝ ասելով Իմ Սուրբ Վարդարանը:

Այնքան կարևոր է այս աղոթքը, որ հիմա այն իրավամբ պետք է դառնա աղոթքի խաչակրաց արշավանք:

Աղոթքի խաչակրաց արշավանք (26) Կույս Մարիամի Վարդարանը (տես հղումը)

http://www.thewarningsecondcoming.com/how-to-pray/how-to-pray-the-rosary/

Զգացեք խաղաղությունը, զավակներս, երբ մտորում եք Իմ Վարդարանի մասին:

Երբ այդ շնորհները հեղվեն ձեզ վրա այն ասելուց հետո, դուք կիմանաք, որ հաղթում եք մարտը՝ պարտության մատնելու համար չարին:

Ձեր սիրող հրեշտակների Թագուհի

Մայր Փրկության

Աղոթեք, որ խուսափեք միջուկային պատերազմից, որը կվերացնի մարդկության մեկ երրորդը

Երկուշաբթի, 6 փետրվարի, 2012թ, երեկոյան ժ. 08:15

Իմ սիրելի աղջիկ, Իմ հետևորդները պետք է միավորվեն որպես մեկ ընտանիք և ուժեղ մնան:

Ես տալիս եմ Իմ բոլոր սիրելի և վստահելի հետևորդներին անհրաժեշտ շնորհները, որ հանգիստ մնան փոթորկի մեջ:

Մինչ երկիրը շարունակում է ցնցվել ամեն ձևով, ձեր աղոթքները հանգստացնում են Ինձ այս ընթացքում:

Որքան է Իմ սիրտը կոտրվում, երբ տեսնում եմ, թե ինչպես են անմեղ մարդիկ սպանվում Մերձավոր Արևելքի պատերազմներում: Այդ խեղճ հոգիները խարազանվում են և տառապում ճիշտ այնպես, ինչպես Ես տառապեցի:

Չարությունը, որը Ես տեսնում եմ, կթուլացվի, Իսկ Իմ Հոր ձեռքը կուշացնի, բայց չի կանգնեցնի այդ երկրներին միմյանց սպանելուց:

Կնիքները կոտրվել են, աղջիկս, և պատերազմներ կսկսվեն արագորեն:

Աղոթեք, որ հնարավոր լինի խուսափել միջուկային պատերազմի գլոբալ ավերածությունից, որը կարող է վերացնել մարդկության մեկ երրորդը:

Ես ավելի շատ աղոթքների կարիք ունեմ, զավակներս, Ես գիտեմ եմ, թե որքան սրտանց եք դուք աղոթում, բայց խնդրում եմ, Ես աղերսում եմ ձեզ, հրավիրեք ավելի շատ աղոթախմբերի, ընկերների, ընտանիքի անդամների, որ աղոթեն խաղաղության համար:

Ես հիմա ձեզ տալիս եմ մի նոր աղոթքի խաչակրաց արշավանք (27), Աղոթք աշխարհում խաղաղության համար

Ով Իմ Հիսուս Ես գթասրտություն եմ աղերսում

Նրանց համար, ովքեր չարչարված են սարսափելի պատերազմներից

Ես խնդրում եմ, որ խաղաղություն ներարկվի այդ տառապած աղգերի մեջ

Ովքեր կույր են Քո գոյության ճշմարտության հանդեպ

Խնդրում եմ, ծածկիր այդ ազգերին Քո Սուրբ Հոգու զորությամբ, որպեսզի նրանք

Դադարեցնեն իրենց իշխանությունն օգտագործել՝ հալածելու համար անմեղ հոգիներին

Գթա Քո բոլոր երկրներին, որոնք անօգնական են այն չար վայրագությունների դեմ

Որոնք ծածկում են ողջ աշխարհը:

Ամեն:

Աղջիկս, Ես կոչ եմ անում քեզ համբերող լինել, քանի որ քիչ է մնացել Խոստովանությանը: Երբ այն տեղի ունենա, ամեն ինչ ավելի հանգիստ կդառնա:

Գնա խաղաղությամբ և սիրով: Ամենից առաջ, քո ամբողջ վստահությունը դիր քո սիրելի Հիսուսի վրա:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Աստվածային Թագավորության արխիվներում այնքան երկար թաքնված առեղծվածները

Երեքշաբթի, 7 փետրվարի, 2012թ, երեկոյան ժ 08:00

Ես ձեր սիրող Հիսուսն եմ՝ Ամենաբարձրյալ Աստծո Որդին ծնված Մարիամի Անարատ Սրտից: Ես գալիս եմ Սուրբ Երրորդության անունից:

Սրանք այն օրերն են, Իմ սիրելի աղջիկ, որոնք քեզ համար ամենադժվարը կլինեն: Քո տառապանքը, առաջարկված Ինձ քո սրտում ուրախությամբ և ենթարկվելով, շատ հոգիների կփրկի: Դու պետք է խիզախ լինես դա անելիս և չանհանգստանաս քո առողջության համար: Քանի որ սա պարզապես մեկ այլ փորձություն է, որը շատ

երկար չի տևի, բայց որը բավականին առաջ կգնա Ինձ համար կորած հոգիներ բերելու գործում:

Իմ **Ճշմարտության Գիրքը տրվում է,** որպեսզի հավատացողները վկայություն տան, որ Ես հռչակում եմ **Աստվածային Թագավորության արխիվներում այնքան երկար թաքնված առեղծվածները:**

Հիմա, երբ ճշմարտությունը քողազերծվում է, մարդկությունը պետք է ընդունի, որ Իմ Սուրբ Խոսքը հիմա կներկայացվի յուրաքանչյուրին՝ մարսելու համար:

Սա **քաղցր հանգստություն կբերի ձեր հոգիներին,** բայց նրանց համար, ովքեր հեռացած են Ինձնից, չափազանց դժվար կլինի ընդունել այն:

Ճշմարտության դառնությունը դժվար է կուլ տալ, բայց եթե այն ընդունվում է, ապա այն կբերի հանգստություն նրանց, ովքեր կընդունեն, որ այդ իսկապես Ես եմ՝ ձեր թանկագին Հիսուսը, ով գալիս է գրկելու ձեզ այս ժամանակներում:

Ես՝ Աստծո Գառը, գալիս եմ հիմա, որ բերեմ ձեզ դեպի ձեր փրկությունը:

Առանց Իմ օգնության դա հնարավոր չի լինի:

Ես հիմա ձեզ բերում եմ լույսը, և դուք պետք է քայլեք Իմ ետևից մինչ Ես ձեզ կտանեմ դեպի Նոր Դրախտ

Ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ, որ խիզախ լինեք, ուժեղ և անվախ այն սարսափելի անապատում ուր հիմա գտնվում եք:

Հեշտ չի լինի, բայց Ես խոստանում եմ ձեզ, որ այն զորությունը, որը Ես ձեզ կտամ, կնվազեցնի այդ ճամփորդության դժվարությունը:

Ընդունեք այն, ինչի ականատես եք լինում աշխարհում, մինչ մաքրագործումը շարունակվում է մեծ ինտենսիվությամբ: Քանի որ դա անհրաժեշտ է:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք համբերատարության և դիմանալու համար, որովհետև դուք պետք է վեր բարձրանաք խավարից վեր և օգնեք Ինձ բերելու ողջ մարդկությանը լույսի մեջ:

Երբեք հույսը մի կորցրեք: **Պարզապես հիշեք, որ միայն մարդկության միասնականացումը նշանակություն ունի:**

Ձեր աղոթքները, տառապանքը և Իմ հանդեպ ունեցած սերը կօգնեն միավորելու Իմ Սուրբ և թանկագին ընտանիքը երկրի վրա Իմ Նոր Դրախտի մեջ:

Առաջ նայեք, զավակներս, քանի որ սա այն կյանքն է, որի համար դուք սահմանված եք, **երբ ենթարկվեք Իմ Սուրբ Կամքին:**

Ես սիրում եմ ձեզ և օրհնում ձեզ, թանկագին զավակներս, Իմ՝ ձեր սիրող Փրկչի հանդեպ ունեցած սիրո և կարեկցանքի համար:

Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Չարը չի հանգստանա մինչև կաթոլիկ եկեցեղին չտապալվի գետնին

Չորեքշաբթի, 8 փետրվարի, 2012թ, երեկոյան ժ 08:30

Ես Անարատ Հղացյալն եմ: Ես Կույս Մարիամն եմ: Աստծո Մայրը:

Զավակս, այս խեղճ աշխարհը իրարանցման մեջ է, և մինչ սա շարունակվում է, նաև օրեցօր Նախազգուշացման ժամանակն է մոտենում:

Կանխասացվել է, որ Իմ Որդու հանդեպ ատելությունը կտարածվի երկրի վրա գտնվող Նրա Եկեղեցու վրա: Սա արդեն տեղի է ունեցել:

Չարը չի հանգստանա մինչև կաթոլիկ եկեղեցին չտապալվի գետնին:

Երբ եկեղեցին ավերվի, երկու կողմ դուրս կգա: Անկախ նրանից, թե որքան կտառապի եկեղեցին, այն չի կարող մեռնել և չի մեռնի: Դա չի կարող լինել, զավակներս:

Քանի որ չնայած Հայր Աստված թույլ կտա, որպեսզի եկեղեցին երկրի վրա ենթարկվի նույն խարազանմանը, որից տառապել է Իր սիրելի Որդին՝ Հիսուս Քրիստոսը, եկեղեցին, ինչպես Իմ թանկագին Որդին, մեկ անգամ ևս փառքով կարձրանա:

Երբեք չլքեք կաթոլիկ եկեղեցին:

Երբեք չմերժեք Իմ Որդու մյուս քրիստոնյա եկեղեցիները: Քանի որ դուք բոլորդ Քրիստոսի հետևորդներն եք:

Դուք բոլորդ, որ նվիրված եք Իմ Որդուն, պետք է մի կողմ դնեք տարբերությունները և միավորվեք, կռվելու համար հակաքրիստոսի դեմ:

Աղոթեք Աստծո բոլոր զավակների միավորման համար այս հատուկ աղոթքի խաչակրաց արշավանքի միջոցով (27)

Ով Ամենաբարձրյալ Աստված

Մենք ծնկի ենք գալիս Քո առջև՝ խնդրելու համար Քո բոլոր զավակների միասնությունը

Երկրի վրա Քո քրիստոնեական եկեղեցիները միավորելու պայքարում

Թող մեր տարբերությունները չբաժանեն մեզ աշխարհում հավատի մեծ ուրացության այս ժամանակ

Քո հանդեպ մեր սիրով, սիրելի Հայր

Մենք խնդրում ենք Քեզ տալ մեզ շնորհները՝ սիրելու համար միմյանց

Հանուն Քո Սիրելի Որդի՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի,

Մենք պաշտում ենք Քեզ

Մենք սիրում ենք Քեզ

Մենք միավորվում ենք մարտնչելու զորության համար, որ պահպանենք Քո քրիստոնեական եկեղեցիները երկրի վրա

Այն փորձություններից, որոնց կդիմակայենք գալիս տարիներին:

Ամեն:

Վստահեք Ինձ, զավակներս, առաջնորդելու համար ձեզ դեպի Նոր Դրախտը և երկրի վրա Իմ Որդու թագավորումը, ինչպես որ այն պետք է լինի:

Ձեր սիրող Մայր

Մայր Փրկության

Շատ շուտով մի մարդ կգա, ով կձևացնի թե Ես Եմ

Չորեքշաբթի, 8 փետրվարի, 2012թ, երեկոյան ժ 08:45

Իմ սիրելի աղջիկ, շուտով չհավատացող աշխարհի առջև կծավալվեն բոլոր կանխասացված մարգարեությունները:

Նույնիսկ այն անմաքուր հոգիները, ովքեր խուսափում են Ինձնից՝ Իրենց Աստվածային Փրկչից և Հավիտենական Հորից, նրանք էլ կնկատեն: Նրանք կտարակուսեն, թե ինչու է դա տեղի ունենում և առաջին անգամ վերջապես կհասկանան, որ իրենք չեն վերահսկում իրենց սեփական ճակատագիրը:

Իրենց ամբողջ սխալ ընկալված հավատալիքներով և անձնական օգուտի իրավունքներով հանդերձ, նրանք շուտով կհասկանան ճշմարտությունը:

Աղջիկս, առաջ գնալու համար սակայն պետք է աղոթել, որ այդ հոգիները, որքան էլ կորած լինեն Ինձ համար, չհետևեն հակաքրիստոսի և կեղծ մարգարեի հմայքին:

Շատ շուտով մի մարդ կգա, ով կձևացնի, թե Ես Եմ: Բայց, իհարկե, դա չի կարող լինել, քանի որ Ես չեմ գա մինչև ամենավերջը:

Սակայն նա կցուցադրի այն բոլոր որակները, որոնք կխաբեն խեղճ հոգիներին՝ հավատացնելով թե այդ Ես Եմ:

Նա հրաշքներ կգործի, խաղաղության մեծ գործեր, մարդասիրական գործեր և հուզմունք առաջացնող հրապարակային գործեր:

Նրան կպաշտեն կուռքի պես, իսկ նրա զորությունը կգա սատանայից՝ խավարի թագավորից:

Նա կլինի այնքան համոզիչ, որ երբ ցուցադրի մեծ սրբերի հետ կապված հրաշքներ, Իմ սրբազան սպասավորներից շատերը խոնարհությամբ կընկնեն նրա ոտքերի առջև:

Քեզ՝ վերջին ժամանակների ճշմարիտ մարգարեին տրվող Իմ խոսքը կմերժվի և կհեռացվի որպես հերետիկոսություն:

Ես քեզ հիմա շատ նախազգուշացումներ եմ տալիս, աղջիկս, որպեսզի որքան հնարավոր է Իմ զավակներից շատերին տրվի ճշմարտությունը, նախքան սա տեղի կունենա:

Մի հիմարացվեք նրանց կողմից, ովքեր իրենք իրենց բարձրացնում են ձեր աչքում իրենց համարելով սուրբ: Երբեք մի շփոթեք, թե մարդասիրական արարքները միշտ գալիս են Ինձնից:

Չարը ստախոս է: Նա խորամանկ է, և երբեմն կներկայացնի **մի սիրող բարեգործ արտաքին:**

Ուշադիր եղեք այն կազմակերպությունների հանդեպ, որոնց գլխավորում են չափազանց հարուստ անհատներ, ովքեր պարծենում են մարդկությանը փրկելու իրենց ջանքերով: Նրանցից շատերը գաղտնի աշխատում են Իմ խոսքը մերժելու նպատակով:

Այս տեսակի խաբեություն կօգտագործվի հակաքրիստոսի կողմից հավաքագրելու համար լավ մտադրություններ ունեցող, բայց դյուրահավատ հետևորդների:

Հենց որ գայթակղվեք, կընկնեք թակարդը: Հետո ձեզ կհիմարացնեն, որ ընդունեք **գազանի նշանը**, որից դուք պետք է խուսափեք ամեն գնով, այլապես Ինձ համար հավիտյան կորած կլինեք:

Զգոն եղեք միշտ:

Ձեր առաջադրանքը պարզ է: Հիշեք, միայն մեկ Աստված կա, երեք անձ Օրհնյալ Երրորդության մեջ՝ Հայր Աստված, Որդին և Սուրբ Հոգին:

Ցանկացած այլ բան, որ ձեզ կներկայացվի ուրիշ ձևով, գոյություն չունի:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ապօրինի կենակցությունը, պոռնոգրաֆիան և մարմնավաճառությունը մահացու մեղքեր են

Հինգշաբթի, 9 փետրվարի, 2012թ, ցերեկվա ժ 03:00

Իմ սիրելի աղջիկ, մարդը պետք է շրջվի մեղքից, և շտուով: Այնքան շատ մեղքեր այսօր այլևս չեն դիտվում որպես մեղք:

Այնքան շատ վիրավորանքներ են կատարվում Իմ Հոր դեմ առանց դրանք հանցանք համարելու:

Զավակներս, դուք պետք է կանգ առնեք: Դուք ոչնչացնում եք ձեր կյանքը: Սատանան ծաղրում է Ինձ, մինչ հպարտանում է այն հոգիներով, որոնց գողանում է Ինձնից յուրաքանչյուր վայրկյան:

Եթե տեսնեիք այն հոգիները, միլիոնավոր հոգիներ, որոնք գլորվում են հավիտենական կրակների մեջ, դուք շոկից կմեռնեիք:

Որքան է Իմ սիրտը կոտրվում ականատես լինելով այն սարսափին, որն այդ հոգիները, ովքեր երկրի վրա գտնվելու ժամանակ ապրել են սարսափելի մեղքի մեջ, ստիպված են կրել:

Մեղքերը, որոնց մեջ նրանք մեղավոր էին, ձեր կարծիքով մահացու մեղքեր չեն:

Ես խոսում եմ **ապօրինի կենակցության մասին,** որն այսօր աշխարհն այնքան հեշտությամբ է ընդունում, մասնակցելով դրան և տեսնելով **պոռնոգրաֆիա, մարմնավաճառություն** և **սեռական բռնություն**:

Ես ի նկատի ունեմ այլոց հանդեպ ատելությունը, ինչպես նաև նրանց, ովքեր ցավ և թշվառություն են պատճառում իրենցից ավելի դժբախտներին:

Նույնն է նաև **կռապաշտության մեղքը,** երբ պաշտում եք նյութական բարիքները ամեն ինչից վեր, չնայած դրանք ոչ այլ ինչ են, քան մոխիր:

Մի՞թե չեք հասկանում, որ երբ այս ձևով մեղք եք գործում, դուք օրեցօր ավելի եք հեռանում Ինձնից: Այդ դեպքում ձեզ համար չափազանց դժվար է դառնում ազատվել խավարի թագավորի ձեզ վրա ունեցած ազդեցությունից:

Արթնացեք, զավակներս: Գիտակցեք դժոխքի գոյությունը և վախեցեք հավիտենական դատապարտման դարպասներից ներս մտնելուց:

Ես ձեզ սա ասում եմ ոչ թե վախեցնելու համար, այլ վստահանալու, որ հասկանում եք, որ մահացու մեղքը տանում է ձեզ այնտեղ, եթե դուք հիմա դեպի Ինձ չշրջվեք:

Աղոթք, շատ աղոթքի կարիք կլինի, որ շրջվեք ետ դեպի Ինձ, բայց Ինձ լսեք հիմա: Եթե ձեր մեջ կան մարդիկ, ովքեր հուսահատ են, վշտացած և անօգնական են զգում մեղքի այն անդունդի պատճառով, որի մեջ գտնվում են, Ես կներեմ ձեզ:

Դուք պետք է ճշմարիտ խղճի խայթ ցույց տաք և գնաք խոստովանության հիմա: Եթե չեք կարող գնալ խոստովանության, ապա յոթ օր շարունակ ասեք Իմ աղոթքի խաչակրաց արշավանքի աղոթքը մեղքերի ամբողջական թողություն ստանալու համար.

Ով Իմ Հիսուս, Դու երկրի Լույսն ես

Դու այն բոցն ես, որ դիպչում է բոլոր հոգիներին

Քո գթասրտությունն ու սերը սահման չեն ճանաչում

ՄԵՆՔ արժանի չեն այն զոհաբերությանը, որը Դու կատարեցիր խաչի վրա

Սակայն գիտենք, որ մեր հանդեպ Քո սերն ավելի մեծ է, քան այն սերը որը մենք ունենք Քո հանդեպ

Տուր մեզ, ով Տեր, խոնարհության ընծան, որ արժանի լինենք Քո Նոր Թագավորությանը

Լցրու մեզ Սուրբ Հոգով, որ կարողանանք առաջ գնալ և առաջնորդել Քո բանակը

Քո Սուրբ Խոսքի ճշմարտությունը հռչակելու և մեր եղբայրներին ու քույրերին նախապատրաստելու համար

Երկիր վրա Քո Երկրորդ Գալուստի փառքի համար

Մենք պատվում ենք Քեզ

Մենք գովաբանում են Քեզ

Մենք առաջարկում ենք մեր անձը, մեր վշտերը, մեր տառապանքները՝ որպես ընծա Քեզ, հոգիներ փրկելու համար

ՄԵՆՔ սիրում ենք Քեզ, Հիսուս

Գթա Քո բոլոր զավակներին, որտեղ էլ որ նրանք լինեն:

ԱՄԵՆ:

Ես երբեք չեմ հրաժարվում մեղավորներից և յուրահատուկ կարեկցանք եմ զգում նրանց հանդեպ:

Ես սիրում եմ նրանց յուրահատուկ ձևով, բայց ատում եմ նրանց մեղքերը:

Օգնեք Ինձ փրկել ձեզ, զավակներս: Մի թողեք մինչև չափազանց ուշ լինի:

Ձեր սիրող Հիսուս

Հայր Աստված. Երկրաշարժեր կզգացվեն որպես փոքր երկնային պատժի մաս, նախքան Նախազգուշացումը

Ուրբաթ, 10 փետրվարի, 2012թ, երեկոյան ժ 07:50

Ես Հայր Աստվածն եմ, ամեն բանի Արարիչը: Ես գալիս եմ Սուրբ Երրորդության անունով:

Իմ սիրելի աղջիկ, Ես հայտարարում եմ այսօր, որ հիմա արդեն բոլոր նախապատրաստություններն ավարված են Իմ Որդու մեծ գթասրտության համար:

Խնդրում եմ, տեղեկացրու Իմ զավակներին իրենց պարտականության մասին՝ աղոթելու այն բոլոր հոգիների համար, ովքեր իրենք իրենց հեռացրել են Ինձնից՝ Հավիտենական Հորից: Միայն դուք կարող եք օգնել, զավակներս, փրկելու համար այս հոգիներին:

Ես նաև ցանկանում եմ տեղեկացնել ձեզ, որ մի շարք երկրաշարժեր կզգացվեն մինչ Ես ներքև կնետեմ մի փոքր երկնային պատիժ՝ պատժելու համար այն չար հոգիներին, ովքեր չարչարում են իրենց ընկեր հայրենակիցներին:

Աղջիկս, երբ այդ պատիժն ավարտվի, կգա Նախազգուշացման ժամանակը:

Մարդկությունը կպատվի Իմ Որդուն, երբ թողություն փնտրի այն բանի համար, թե ինչպես է վիրավորել Ինձ:

Շատերը դարձի կգան: Շատերը կմեռնեն: Նրանք, ովքեր կմեռնեն, նրանց հոգիները կարող են փրկվել ձեր աղոթքների միջոցով: Դրանից հետո աշխարհը մի փոքր կհանդարտվի, և ժամանակ կտրվի ապաշխարության համար:

Հիշեք, Ես սիրում եմ Իմ բոլոր զավակներին, սակայն **ինչպես ցանկացած լավ Հայր Ես պետք է պատժեմ Իմ զավակներին,** որպեսզի նրանք հասկանան ճշտի և սխալի միջև տարբերությունը:

Այս մաքրագործումը կարթնացնի Իմ զավակներին, և շատ շատերը երախտագիտությամբ կընդունեն շնորհները, երբ դրանք հեղվեն մարդկության վրա Նախազգուշացման ընթացքում:

Ես սիրում եմ ձեզ, զավակներս, և Իմ ցանկությունն է փրկել ձեզանից յուրաքանչյուրին, ներառյալ այն կարծրացած հոգիներին, ովքեր չեն ընդունի Սուրբ Երրորդության գոյությունը:

Ձեր սիրող Հայր

Ամենաբարձրյալ Աստված

Իմ խեղճ սուրբ երեցը՝ Բենեդիկտ XVI Պապը, կվտարվի Հռոմի Մայր Աթոռից

Շաբաթ, 11 փետրվարի, 2012թ, առավոտյան ժ 11:30

Իմ սիրելի աղջիկ, պատերազմները ավելանում են ամենուր, և շատ շուտով **Իմ Հոր ձեռքը կմիջամտի՝ այս չարիքը կանգնեցնելու համար:**

Մի վախեցեք, քանի որ **մարդկությանը փրկելու պլաններն ավարտված են,** և հիմա արդեն շատ չի մնացել, երբ Իմ Մեծ Գթասրտությունը կտրվի ձեզանից յուրաքանչյուրին:

Երբեք չվախենաք հակաքրիստոսի գործերից, երբ դուք, սիրելի զավակներս, **ձեր ներսում ունեք աշխարհի վրա նրա ճանկը թուլացնելու զորությունը ձեր աղոթքների միջոցով:**

Շուտով կսպանվեն աշխարհի այլ առաջնորդներ. և Իմ խողճ սուրբ երեցը՝ **Բենեդիկտ XVI Պապը կվտարվի Հռոմի Մայր Աթոռից:**

Անցյալ տարի, աղջիկս, Ես քեզ ասացի Վատիկանի միջանցքներում եղած դավադրության մասին:

Իմ սուրբ երեցին ոչնչացնելու պլանը մշակվել է 2011թ. մարտի 17-ին, և դա կկատարվի, քանի որ կանխասացվել է:

Տարածիր Իմ սուրբ խոսքը աշխարհի յուրաքանչյուր անկյունում հիմա և կարգավորիր, որպեսզի որքան հնարավոր է շատ երկրներում տարածվեն Իմ պատգամների տպագիր օրինակները:

Քեզ առաջնորդություն է ցույց տրվում, ուստի դու պետք է անես այն, ինչն ամենալավն է: Խնդրիր Ինձ աղոթքի մեջ, որ քեզ օգնություն ուղարկվի, և դա կարվի:

Ձեր Հիսուս

Այլ երկրներ կհետևեն Անգլիային՝ արգելելու հանրային աղոթքը

Կիրակի, 12 փետրվարի, 2012թ, առավոտյան ժ 10:30

Զավակս, որքան եմ Ես լալիս, երբ տեսնում եմ, թե որքան շատերն են փորձում արգելել Իմ սիրելի Որդու հանդեպ մեծարանքը:

Ես քեզ նախկինում ասել եմ, որ մարտը սկսվել է: Արդեն պլաններ կան **արգելելու Անգլիայում Հայր Աստծուն և Նրա թանկագին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին ուղղված հանրային աղոթքը:**

Սա միայն սկիզբն է: Շատ շուտով դա կտարածվի դպրոցների և այլ հասարակական վայրերի վրա, մինչև որ անօրինական կդառնա Իմ Որդուն՝ Հիսուս Քրիստոսին նվիրաբերված եկեղեցիներում աղոթելը:

Իմ Որդու հանդեպ մարդկանց և բարձր պաշտոններում գտնվողների մեջ եղած ատելությունը նշանակում է, որ նրանք կանեն իրենց կարողացած ամեն ինչ՝ արգելելու համար քրիստոնեության հանրային պրակտիկան:

Նրանք, ովքեր ատում են Իմ Որդուն, ասում թե իրենք չեն հավատում Իմ Որդուն: Բայց ինչպե՞ս կարող են նրանք այդքան ատելություն ցույց տալ մեկի հանդեպ, ում համար ասում են, թե չեն հավատում:

Իմ Որդու հանդեպ նրանց արհամարհանքն ավելի պարզ կդառնա, երբ այլ երկրներ կհետևեն Անգլիային՝ արգելելու քրիստոնեության հանրային պրակտիկան:

Իմ Որդուն պատվելը կդառնա վիրավորանք:

Մյուս կրոնները, որոնք պատվում են Հայր Աստծուն, նույպես կտառապեն:

Սակայն նրանք այնքան չեն տառապի, որքան հռոմեական կաթոլիկ եկեղեցին և մյուս քրիստոնյաները: Վերջինների տառապանքը ավելի կուժեղանա:

Աղոթեք, զավակներս, խուսափելու համար այս չարիքի մեծ մասից, որը հիմա ավելի ակնհայտ է դառնում:

Քանի որ նրանք, ովքեր հայտարարում են, թե չեն սիրում Իմ Որդուն, այսքան ժամանակ թաքնված են եղել:

Հիմա նրանք առաջ կգան վստահությամբ և կհալածեն Իմ Որդուն այն տառապանքների միջոցով, որոնք կպարտադրեն Նրա հետևորդներին:

Սրտանց աղոթեք, զավակներս, պաշտպանելու համար ձեր հավատը և ձեր իրավունքը՝ պատվելու Իմ Որդուն հրապարակայնորեն առանց ստիպված լինելու ամաչել դրա համար:

Խնդրում եմ աղոթեք այս աղոթքը (աղոթքի խաչակրաց արշավանք 28) պաշտպանելու համար քրիստոնեությունը.

Ով իմ Տեր Հիսուս Քրիստոս

Ես խնդրում եմ Քեզ դուրս հեղել Քո Սուրբ Հոգին

Քո բոլոր զավակների վրա

Ես խնդրում եմ Քեզ ներել բոլոր նրանց, ովքեր իրենց հոգիներում ատելություն ունեն Քո հանդեպ

Ես աղոթում եմ որ Քո Մեծ Գթասրտության ժամանակ աթեիստները բացեն իրենց կարծրացած սրտերը

Եվ Քո զավակները, ովքեր սիրում են Քեզ կարողանան պատվել Քեզ արժանապատվորեն՝ բարձրանալով ամեն տեսակի հալածանքներից վեր

Խնդրում եմ լից Քո բոլոր զավակներին Քո հոգու ընծայով, որպեսզի նրանք կարողանան բարձրանալ

Քաջությամբ և առաջնորդեն Քո բանակը սատանայի, նրա դևերի և բոլոր այն հոգիների դեմ, ովքեր նրա (սատանայի) կեղծ խոստումների ստրուկներն են:

ԱՄԵՆ:

Գնա խաղաղությամբ, աղջիկս, և ասա աշխարհին, որ նախապատրաստվեն այս մեծ անարդարության համար:

Շնորհակալ եմ, որ պատասխանեցիր Իմ կանչին այսօր:

Մարիամ բոլոր հրեշտակների Թագուհի

Մայր Փրկության

Սուրբ Աստվածաշունչը մի կողմ չի հրվում հօգուտ այս պատգամների

Կիրակի, 12 փետրվարի 2012թ, ցերեկվա ժ 03:00

Իմ սիրելի աղջիկ, Ես կարոտել էի քեզ երեկ: Ես արթնացրեցի քեզ գիշերվա ընթացքում, հիշու՞մ ես: Դու չափազանց հոգնած էիր, բայց Ես այնքան էի ցանկանում խոսել քեզ հետ:

Այսօր Ես պետք է կոչ անեմ քեզ ասելու աշխարհին, որ **պատերազմն ավելանալու է և եթե ավելի շատ Իմ հետևորդներից չաղոթեն, միջուկային պատերազմ կսանձազերծվի:**

Սա մոտ է, և **աղոթքը կարող է կասեցնել դա** Իմ Հավիտենական Հոր ձեռքով:

Ես կարիք ունեմ, որ Իմ հետևորդներից ավելի շատերը տարածեն **ողջ մարդկությանը տրվող Իմ Սուրբ Խոսքը՝ ձեր հոգիների բարօրության համար:**

Աղջիկս, քեզ վրա հարձակվում են նրանք, ովքեր ասում են, թե **Իմ Հոր Սուրբ Գիրքը մի կողմ է հրվում հօգուտ այս պատգամների: Դա այդպես չէ:**

Այսօր Իմ պատգամները Սուրբ Գրքում պարունակվող ուսուցումներն ամրապնդելու համար են , **որովհետև այնքան շատերն այսօր չգիտեն, թե ինչ է պարունակվում այնտեղ (Սուրբ Գրքի մեջ):**

Ոչ էլ նրանք կիմանան ժամանակների վերջի նախազգուշացման նշանները, եթե Ես հիմա դրանք ձեզ չբացահայտեմ:

Ինչու՞ է այդպես: Ես պետք է նախապատրաստեմ ձեր հոգիները Իմ Նոր Դրախտի համար: **Երբեք մի մտածիր, թե Ես քեզ ուրիշ ուղու վրա եմ տանում:**

Քանի որ միայն մեկ ուղի կա դեպի Դրախտ, և Ես նա եմ, ով կառաջնորդի ձեզ դեպի նրա դարպասները:

Ուշ դարձրեք Իմ խոսքին: Լսեք Իմ կանչը: Քայլեք Ինձ հետ գլուխներդ բարձր առանց վախի ձե ր սրտերում, մինչ Ես առաջնորդում եմ Իմ բանակը, որ օգնի Ինձ ետ պահանջելու երկրի վրա Իմ Թագավորությունը:

Ձեր սիրող Հիսուս

Սատանայի վերջին օրերը. Ինչպես մեռնող իշամեղվի խայթոցն ամենացավոտն է

Երկուշաբթի, 13 փետրվարի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Աղջիկս, խնդրում եմ հիշիր, որ մարդ միայն պետք է շուրջը նայի, իմանալու համար, որ մեծ փոփոխություններ են եկել աշխարհում:

Ամենօրյա նորմալ իրադարձություններն այլևս նույնը չեն: Ուրախությունը, որը դուք ստանում եք նյութական իրերից, զավակներս, կորցրել է իր հմայքը:Նրանք այլևս չեն ձգում: Դրանք ոչնչության թեթևակի երանգ ունեն:

Ինչու՞: Մի՞թե չգիտեք, որ դա հակաքրիստոսի խարազանն է և երկրի վրա նրա ներկայությունը, որ ձգում է այդ ստվերները:

Նա, Սատանայից սերվածը, վարակում է ձեր հասարակության յուրաքանչյուր մակարդակը, ներառյալ քաղաքականությունը, ռազմական ուժերը, ֆինանսական հաստատությունները, մարդասիրական կազմակերպությունները և նույնիսկ ձեր եկեղեցիները:

Ոչ մի սեկտոր անմասն չի մնացել, որպեսզի նա ակարողանա ցավ պատճառել մարդկությանը երկրի վրա իր այս վերջին օրերին:

Հիշեք, որ Ես՝ ձեր Հիսուսը, տվել եմ ձեզ, Իմ հետևորդներ, Սուրբ Հոգու զորությունը, որ անզոր դարձնեք այդ չարություններն իրագործողներին:

Որքան ավելի շատ ձեզնից բարձրանան մարտի մեջ ձեր հավատի զորությամբ, այնքան ավելի թույլ կլինի հակաքրիստոսի ճանկը:

Աղոթքը, և հատկապես ձեզ տրված խաչակրաց արշավանքի աղոթքները, Իմ պատգամատարներ, կօգնեն դուրս քշելու այդ չարիքը:

Ողջ չարիքը կարող է ոչնչացվել աղոթքի միջոցով> Դա այնքան պարզ է:

Օրերը հաշվված են Սատանայի և նրա բանակի համար: Այնուամենայնիվ, նրա խայթոցը, ինչպես մեռնող իշամեղվի խայթոցն է՝ կլինի ամենացավոտը:

Համբերություն և տոկունություն ցուցաբերեք այս փորձությունների ընթացքում և դուք, Իմ բանակ, հույսով և վստահությամբ կքայլեք միասնությամբ դեպի երկրիվրա Իմ Նոր Դրախտի դարպասները:

Ձեր Փրկիչ Հիսուս Քրիստոս

Հայր Աստված. Եվրոպան կլինի Կարմիր Վիշապի առաջին թիրախը, որին կհետևի ԱՄՆ-ը

Երեքշաբթի, 14 փետրվարի, 2012թ, երեկոյան ժ 06:00

Աղջիկս, իմ ժամկետները՝ կապված Իմ երկնային պատժի և Նախազգուշացման հետ, ձեր իմանալու համար չէ:

Կարիք չկա անհանգստանալու ժամանակի Իմ Աստվածային ընտրության համար, քանի որ այն կլինի ըստ Իմ Սուրբ Կամքի:

Սակայն իմացիր հետևյալը, **Կարմիր Վիշապը, որի մասին քեզ ասվել էր որոշ ժամանակ առաջ, հիմա բարձրացրել է** իր գլուխը կամաց, սակայն մահացու մտադրությամբ՝ խժռելու համար քրիստոնյաներին աշխարհով մեկ:

Այնքան երկար ժամանակ համբերատար կերպով սպասելով, նա հիմա ներքև կսլանա և իր բերանից ելնող կրակով կոչնչացնի ամեն ինչ, որ պատվում է Ինձ՝ Ամենաբարձրյալ Աստծուն և Իմ Սիրելի Որդի Հիսուս Քրիստոսին:

Եվրոպան կլինի նրա առաջին թիրախը, իսկ հետո՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները:

Կոմունիզմը կներմուծվի և վայ նրանց, ովքեր կդիմադրեն Կարմիր Վիշապի իշխանությանը:

Աղջիկս, Ես սհասկանում եմ, որ վերջին աստվածային պատգամները ուժասպառ են անում, բայց ճշմարտությունը պետք է բացահայտվի:

Միայն մարգարեությունների հայտնի դարձնելով է, որ հավատը կվերականգնվի: Այս է պատճառը, թե ինչու են հիմա Իմ զավակներին տրվում մարգարեություններ, որպեսզի նրանք ճանաչեն Իմ ուսուցումների ճշմարտությունը:

Իմ մարգարեներ Դանիելին և Հովհաննեսին տրված բոլոր մարգարեությունները կծավալվեն շերտ առ շերտ:

Մանրամասներ կտրվեն քեզ, աղջիկս, օգնելու համար կառուցել երկրի վրա Իմ մնացորդ եկեղեցին:

Նրանք, Իմ զավակները, պետք է սփոփվեն Իմ սիրո պատգամներով, և Ես կվստահեցնեմ նրանց դրանում:

Հենվեք Ինձ վրա, զավակներս, ձեր սիրող Հոր վրա, և Ես կտամ ձեզ այն շնորհները, որոնց կարիքն ունեք թշնամուն պարտության մատնելու համար:

Նրանք չեն կարող հաղթել, և նրանց ուժը ոչ միայն կարճ կտևի, այլև Կարմիր Վիշապն ու նրա կույր զինակիցները կգցվեն հավիտենական դատապարտության կրակների մեջ:

Աղոթեք նրանց հոգիների համար, որովհետև դուք կարող եք օգնել նրանց ձեր աղոթքներով, նրանց փրկելու համար:

Ճիշտ ինչպես ընտրյալ հոգիների տրվում է երևեմների ընծան, կամ ինչպես քո դեպքում է, Ինձ և Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսին տեսնելու ընծան, որոշ հոգիների ցույց են տրվում սատանայի և նրա ընկած հրեշտակների տսիլքներ:

Այնքան մոտ է նրանց նվիրվածությունը չարին, որ սատանայի հետևորդներից շատերը կնախընտրեն մեռնել, քան թե ընդունել Ինձ՝ իրենց Հավիտենական Հորը:

Իմ խոստումը հետևյալն է, զավակներս.

Ես կպաշտպանեմ Իմ բոլոր զավակներին, ովքեր իրենց հոգիներում պահում են Իմ սիրո կնիքը:

Դուք զերծ կմնաք հալածանքից, որպեսզի ուժեղ մնաք, որ ձեր ողջ կարողությամբ աղոթեք այդ չար մարդկանց համար:

Սա կօգնի թուլացնել տեռորը և կասեցնելպատերազմը, սովն ու կրոնական հալածանքը:

Աղոթքը Ինձ՝ ձեր Հորը, հիմա պետք է ներառվի ձեր ամենօրյա աղոթքների մեջ այս հատուկ աղոթքի միջոցով. (Աղոթքի խաչակրաց արշավանք 30)

Ով Իմ Հավիտենական Հայր

Աստված Արարիչ Տիեզերքի

Հանուն Քո թանկագին Որդու

Ես խնդրում եմ Քեզ, դադրձրու մեզ, որ Քեզ ավելի շատ սիրենք:

Օգնիր մեզ լինել քաջ, անվախ և ուժեղ հակառակորդի դեմ

Ընդունիր մեր զոհաբերությունները, տառապանքները և փորձությունները որպես ընծա
Քո գահի առաջ՝ փրկելու համար Քո զավակներին երկրի վրա:

Մեղմացրու անմաքուր հոգիների սրտերը

Բաց արա նրանց աչքերը Քո սիրո ճշմարտության հանդեպ

Որպեսզի նրանք կարողանան միանալ Քո բոլոր զավակների հետ միասին

Երկրի վրա Դրախտի մեջ, որը դու սիրով ստեղծել ես մեզ համար

Ըստ Քո Աստվածային Կամքի:

Ամեն;

Խնդրում եմ մի անտեսեք Իմ Երկնային միջամտությունը ձեր կյանքում այսօր, զավակներս:

Ձեզանից նրանք, ովքեր խորը սեր ոնեն Իմ՝ իրենց Հոր հանդեպ, իմացեք, որ Ես պետք է նախապատրաստեմ ձեզ այս կարևոր ուղևորության համար:

Ես Իմ պարտականությունը կատարած չէի լինի որպես ձեր սիրող Արարիչ և Հայր, եթե Ես չհաղորդակցվեի ձեզ հետ այս վեջին ժամանակներում երկրի վրա, ինչպես հիմա է:

Նրանք, ովքեր կվախենան Իմ Ամենասուրբ Խոսքից, թույլ տվեք Ինձ սփոփել ձեզ, ասելով, որ **սա չի նշանակում աշխարհի վերջը, քանի որ աշխարհի վերջը չէ:**

ԱՅն պարզապես երկրի վրա Սատանայի իշխանության ավարտն է, որը պետք է ողջունել, զավակներս:

Ժամանակը, մոտենում է, որ Իմ Որդին վերցնի իրավամբ իրեն պատկանող գահը, երբ Նա կգա, Երկրորդ անգամ, թագավորելու երկրի վրա Նոր Կատարյալ Դրախտի մեջ:

Իմ սիրտը պայթում է ուրախությունից, երբ Ես ասում եմ ձեզ, զավակներս, այն նոր երկրի մասին, որը Ես նախապատրաստել եմ ձեզ համար:

Իմ զավակները կապրեն 1000 տարի այն Դրախտում որը Ես ստեղծել էի Ադամի և Եվայի համար:

ԱՅնտեղ կլինի խաղաղություն, սեր, ներդաշնակություն և դուք ոչ մի բանի կարիք չեք ունենա:

Մարդիկ կամուսնանան, երեխաներ կունենան, իսկ ծաղիկները, գետերը, ծովերը, լեռներն ու լճերը զարմանքից շնչասպառ կանեն ձեզ:

Կենդանիները կապրեն Իմ զավակների հետ ներդաշնակության մեջ, և ձեզ կղեկավարի սերը՝ Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի թագավորության ներքո:

Միայն այդ ժամանակ Իմ Սուրբ Կամքը կլինի երկրի վրա, ինչպես որ Երկնքում է:

Ձեր Սիրող Հայր

Աստված՝ արարիչ ողջ մարդկության

Աստված Ամենաբարձրյալ

Չար Խումբը նյութում է ամենամեծ սուտը, որպեսզի վերահսկողություն վերցնի երկրների վրա

Երեքշաբթի, 16 փետրվարի, 2012թ, երեկոյան ժ 08:00

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է ասես Իմ զավակներին, Իմ բոլոր հետևորդներին, որ **կապվեն և կազմեն պաշտպանության շղթա աղոթքի մեջ:**

Աղոթքի մեջ որպես եղբայրներ և քույրեր միանալով այն բոլոր կորած զավակների համար, ովքեր մոլորվել եմ Իմ սիրուց, սակայն չեն կարողանում խաղաղություն գտնել իրենց հոգիների մեջ, դուք կարող եք փրկել նրանց:

Նրանք կարիք ունեն, որ դուք աղոթեք իրենց համար, **որովհետև Նախազգուշացումը դարձի չի բերի նրանց խեղճ հոգիները:**

Դուք, Իմ հավատարիմ հետևորդներ, տալիս եք Ինձ այն սփոանքը, որի կարիքն ունեմ, երբ զգում եմ այն սարսափելի ցավը և դժվարությունները, որոնք հիմա կրում եմ Իմ զավակները աշխարհի գրեթե յուրաքանչյուր անկյունում:

Այս չար խումբը, կազմված աշխարհի ամենահզորներից և էլիտար անձանցից, նյութում են ամենամեծ սուտը՝ **դիտավորյալ պլանավորելով վեցնել վերահսկողությունը Միջին Արեվելքում, Եվրոպայում և ԱՄՆ-ում:**

Նրանց պլանը ծավալվում է հենց ձեր աչքերի առջև: Մի՞թե չեք կարողանում տեսնել: Ալդ պլանը մշակվել է տասնամյակներ շարունակ:

Իմ զավակներից յուրաքանչյուրը պետք է միշտ արթուն մնա:

Թույլ մի տվեք նրանց վերցնելու ձեր երկրները: Պաշտպանեք ձեր երկրները:

Փողը նրանց խաբեության զենքն է: Ձեր բանկային համակարգերի փլուզումը դիտավորյալ էր: Հիմա նրանք առաջ են շարժվում ավարտելու համար իրենց պլանի հաջորդ փուլը:

Դուք զավակներս, կարող եք կանգնեցնել դա ծավալվելուց ձեր աղոթքների միջոցով:

Արդեն իսկ Իմ Հայրը արգելքներ է դնում նրանց ճանապարհին:

Իմ հետևորդները միահյուսում են շատ երկրներ: Հիմա դուք պետք է միավորվեք աղոթքի մեջ **կանգնեցնելու համար եվրոպական առաջնորդներին,** որոնցից ոմանց բնորոշ է իրենց չար ուղիներով սարսափելի դժբախտություններ բերել անմեղ մարդկանց վրա:

Ես կոչ եմ անում ձեզ ասել այս խաչակրաց արշավանքի աղոթքը (31) նրանց կանգնեցնելու համար.

Ով Իմ Հիսուս

Թող իմ աղոթքը կանչի Քո Սուրբ Հոգուն

Իջնելու այն առաջնորդների վրա, ովքեր տարված են ագահությամբ, հպարտությամբ, մեծամտությամբ

Որ դադարեցնեն հալածանքը Քո անմեղ զավակների հանդեպ

Ես խնդրում եմ Քեզ, որ կանգնեցնես աղքատության, սովի և պատերազմների հարձակումը Քո զավակների վրա

Եվ ես աղոթում եմ, որ Եվրոպական առաջնորդները կբացեն իրենց սրտերը Քո սիրո ճշմարտության հանդեպ:

Ամեն:

Աղջիկս, **աղոթքի շղթան կտարածվի հեռուներում,** և Սուրբ Հոգու զորությունը կօգնի կանգնեցնել այդ մարդկանց, ովքեր իշխանություն ունեն դադարեցնել տառապանքը, որ նրանց գործողությունները կասեցվեն:

Տարածիր Իմ խոսքը, որպեսզի դարձ տարածես:

Թագավորելու Իմ ժամանակը մոտ է: Ուստի բավականին ժամանակ չի լինի բոլոր հոգիներին փրկելու համար:

Արեք ինչ կարող եք Ինձ համար, ձեր Հիսուսի համար, ով սիրում և փայփայում է ձեզ բոլորիդ:

Մենք պետք է աշխատենք միասին, զավակներս, հանուն ողջ մարդկության համար մղվող մեր պայքարի, կանխելու համար հակաքրիստոսին և նրա խաբեության չար պլանին:

Հույս, սեր և աղոթքներ, զավակներս: Սա եմ Ես ակնկալում ձեզնից:

Ես շնորհակալ եմ ձեզ ձեր ամբողջ հավատարմության և հնազանդության համար:

Դուք չեք տեսել, սակայն հավատացել եք: Հենց որ լսեցիք Իմ ձայնը, այս պատգամների միջոցով, դուք ճանաչեցիք Ինձ:

Դուք կարողացաք անել դա Սուրբ Հոգու պատճառով, որը թագավորում է ձեր հոգիներում:

Դուք պետք է կիսեք այս մեծ ընծան, որպեսզի կարողանաք բերել ձեր բոլոր սիրելիներին ձեզ հետ երկրի վրա Իմ Նոր Դրախտ:

Ես սիրում եմ ձեզանից յուրաքանչյուրին և ամեն մեկիդ: Դուք Ինձ այնպիսի սփոփանք և ուրախություն եք բերում:

Ձեր սիրող Հիսուս

Կույս Մարիամ. Ներմուծեք աբորտը Իռլանդիա և դուք կկտրեք Իմ Սրտի հետ ունեցած կապը

ՈԻրբաթ, 17 փետրվարի, 2012թ. ցերեկվա ժ. 03:30

Ես ձեր սիրող Մայրն եմ՝ հրեշտակների Թագուհին, Կույս Մարիամը, Անարատ Հղացյալը:

Ոհ, ինչպես եմ Ես այսօր սգում, մինչ Իռլանդիան՝ Ինձ՛ իրենց Սիրելի Մորը նվիրված երկիրը, ընկնում է չարի թակարդը:

Մեծ խավար է իջել այս ազգի վրա: Այնքան շատերն են կորցրել իրենց հավատքը, ճիշտ ինչպես այնքան շատերն իրենց սիրտն են շրջել Իմ Սիրելի Որդուց՝ Հիսուս Քրիստոսից:

Իմ զավակներն Իռլանդիայում թույլ են տվել չարին, որ **իրենց սրտերը քար դարձնի:**

Նրանք, ովքեր սիրում են Իմ Որդուն, ցավի մեջ են, մինչ ականատես են լինում այն աշխարհիկությանը, որը վերահսկում է այս երբեմնի սուրբ երկրին:

Հիմա փորձեր են արվում աբորտը օրինականացնել (ներմուծել), և եթե դա տեղի ունենա, այն խորապես կվիրավորի Իմ Թանկագին Որդուն:

Զավակներս, եթե դուք ներմուծեք աբորտը Իռլանդիա, ապա դա կկտրի այն կապը, որը ձեզ այնքան մոտեցրել է Իմ Սրտին:

Հիմա այնքան շատերն են Իռլանդիայում վիրավորում Իմ Որդուն՝ Նրան ցույց տրվող անհարգալիր վերաբերմունքով: Ինձ նույնպես այլևս չեն հանդուրժում, և Իմ անունը նվաստացվում է:

Իռլանդիայի զավակներ, ընտրված որպես հատուկ հոգիներ՝ աշխարհով մեկ տարածելու համար Իմ Հոր խոսքը, դուք պետք է լսեք Ինձ:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որ աբորտի վերաբերյալ օրենքներ մտնցնելու պլանները չիրականանան:

Եթե դա տեղի ունենա, ապա Իռլանդիան բավականին շատ բարեհաճություն կկորցնի Իմ Հոր Թագավորությունում:

Աբորտի մեղքը **ամենածանրն է** Իմ Հոր աչքում: **Դա ամենավատ տեսակի գենոցիդն է:**

Դուք պետք է պայքարեք այդ չարիքի դեմ, զավակներս: Դուք պետք է դա հիմա անեք, այլապես վերջին աստվածային կապող օղակը, որը պետք է ամրապնդվի, ավելի կթուլանա:

Դուք պետք է բարձրանաք, զավակներս, **և պահանջեք ձեր Կաթոլիկ և Քրիստոնեական հավատը,** քանի որ դրանք գողացվում են ձեզնից:

Թույլ մի տվեք իշխանություն ունեցողներին ծաղրել ձեզ, երբ հռչակում եք Աստծո Սուրբ Խոսքը:

Խավարի ոգին հիմա ծածկել է ոչ միայն ձեր երկիրը, այլև այն սուրբ վայրերը, ուր Ինձ պետք է հարգանք մատուցվեր:

Ես վշտից ողբում եմ, տեսնելով թե ինչպես է Իմ սիրելի Իռլանդիան ընկնում ճանապարհից դուրս:

Սակայն դեռևս հույս կա, զավակներս: Բայց դուք պետք է միանաք, ուժով, ձեր հավատը պաշտպանելու համար:

Շուտով ձեզ կստիպեն լքել ոչ միայն ձեր կաթոլիկ հավատը, այլև ձեր քրիստոնյա հավատը:

Ետ պահանջեք ձեր երկիրը սոցիալիզմից և աշխարհիկ դիկտակտուրայից:

Նրանք կաղերսեն քաղաքացիների իրավունքը, սակայն կզրկեն այդ նույն իրավունքներից, որոնք հռչակում են, ներառյալ աղոթելու իրավունքը:

Նրանք կստիպեն ձեզ ընդունել, օրենքով, դեռևս չծնված երեխաներին սպանելու իրավունքը:

Հիշեք, յուրաքանչյուր հոգի սիրով ստեղծվել է Աստծո՝ Ամենակարող Հոր կողմից:

Ով էլ որ ընտրում է աբորտը կամ օժանդակում աբորտի չար գործին, մահացու մեղք է գործում:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք, Իռլանդիայի համար Իմ **խաչակրաց արշավանքի աղոթքը (32)**

Ով Մայր Փրկության

Աղոթիր Իռլանդիայի Քո զավակների համար՝ արգելելու համար

Որ աբորտի չար գործողությունը չպարտադրվի մեզ

Պաշտպանիր այս սուրբ ազգին հուսահատության մեջ ավելի խորը ընկղմվելուց

Այն խավարից որը ծածկում է մեր երկիրը:

Ազատիր մեզ չարից, ով ցանկանում է ոչնչացնել Քո դեռևս չծնված զավակներին

Աղոթիր, որ այդ առաջնորդներն ունենան քաջությունը՝ լսելու նրանց, ովքեր սիրում են Քո Որդուն

Որպեսզի նրանք հետևեն մեր Տեր Հիսուս Քրիստոսի ուսուցումներին:

Ամեն:

Գնա հիմա, զավակս, և ասա Իռլանդիայի Իմ զավակներին, որ իրենք պետք է ուժեղ մնան: Նրանք պետք է պաշտպանեն այն, ինչը ճիշտ է:

Նրանք երբեք չպետք է վախենան ճշմարտությունը՝ Աստծո Սուրբ Խոսքը հռչակելուց, որքան էլ այն դժվար լինի:

Ձեր սիրող Երկնքի Թագուհի

Մայր Փրկության

Եվրոպական երկրները կընկնեն բռնապետության տակ, որն ավելի լավ չի լինի Հիտլերի ժամանակներից

Շաբաթ, 18 փետրվարի, 2012թ, ցերեկվա ժ 04:00

Իմ սիրելի աղջիկ, Իմ նպատակն է պաշտպանել Իմ հետևորդներից որքան հնարավոր է շատերին, մինչ Իմ Հոր ձեռքը շուտով կիջնի՝ պատժելու համարմարդկությանը իր չարության համար, և պաշտպանել մեղավորների կողմից կատարվող այն սարսափելի չարագործություններից, ովքեր ցանկանում են ոչնչացնել բազմաթիվ ազգերի:

Դուք բոլորդ պաշտպանված կլինեք, բայց դուք պատասխանատվություն ունեք այլոց հանդեպ:

Տեսեք հիմա, երբ եվրոպական երկրները կընկնեն բռնապետության տակ, որն ավելի լավ չի լինի Հիտլերի ժամանակներից:

Պլանները պատրաստ են համաշխարհային խմբի կողմից՝ վերահսկողություն հաստատելու Եվրոպայի յուրաքանչյուր երկրի վրա:

Բաբելոնը գլխիվայր կընկնի ինչպես կանխասացվել է:

Արջը և կարմիր վիշապը կգնան պատերազմ, ճիշտ ինչպես կանխասացվել է:

Հռոմը կդառնան չար կառավարման և տիրապետման նստավայրը:

Իտալիան կքանդվի:

Հունաստանը կլինի այն կատալիզատորը /խթանը/ որը կապահովի Բաբելոնի անկման պատրվակը:

Հիմա ամեն ինչ կբացահայտվի աշխարհին:

Աղոթքը կարող է թեթևացնել իմ խեղճ զավակների տառապանքը, ովքեր ստիպված կլինեն մուրալ այն սնունդը, որը դնում են իրենց բերանի մեջ:

Նրանց հետ կվարվեն ինչպես երեխաների հետ, սակայն նրանք ոտնակոխ կարվեն մինչ կստրկացվեն գլոբալ խմբի կողմից, որն աշխատում է եվրոպական առաջնորդների հետ լծաշարքով:

Նրանք դավաճաններ են, բոլորը, ոչ միայն նրանց հանդեպ, ում ծառայում են, այլև Աստծո՝ Ամենակարող Հոր հանդեպ:

Նրա /Աստծո/ անոունն ատելի է այդ խմբին, ովքեր իրենց երկրներում արգելել են Նրան /Աստծուն/ պատվելը:

Դրա համար նրանք կտառապեն: **Նրանք կպատժվեն և նրանց կարգելվի իրականացնել իրենց չար առաքելությունը:**

Հիմա Իմ Սիրելի Հոր զայրույթը հասել է աննախադեպ բարձունքների, երբ մեծ կարմիր վիշապի բարձրանալն անխուսափելի է:

Այնքան շատ ավերածություններ, զավակներս:

Այնքան շատ ագահություն իշխանության և վերահսկողության համար:

Այնքան շատ ատելություն Իմ՝ իրենց Աստվածային Փրկչի հանդեպ:

Սատանայի չորս պատգամատարներն իջել են և հիմա աշխատում են այդ խմբերի ներսում:

Այդ չար և հզոր խմբերը ղեկավարվում են հակաքրիստոսի կողմից, ով հիմա չափազանց ակտիվ է: Հակաքրիստոսը ղեկավարում է մի շատ մեծ կազմակերպություն:

Այնքան խորամանկ են նրանք, որ շատ քչերն են հասկանում, թե նրանք իրականում ինչ են անում:

Զավակներս, նրանք կփորձեն իրենց ձեռքը վերցնել իրադրությունը և կթվա թե նրանց բոլոր պլաններն իրականանում են:

Բայց այդ ժամանակ է, որ Իմ Հայրը կմիջամտի:

Վայ նրանց, ով կկանգեն Իմ Հոր զայրույթի դեմ:

Նրանց նույնիսկ չի տրվի Նրա առջև դողալու հնարավորությունը, եթե անմիջապես չապաշխարեն:

Ձեզանից շատ քչերին է տրվում ճշմարտությունը, զավակներս, որովհետև այդ մարդկանցի շատերը վերահսկում են այն նորությունները, որոնք դուք ընդունում եք որպես ճշմարտություն:

Դուք ուրիշ այլ միջոց չունեք իմանալու, թե ինչ է կատարվում աշխարհում:

Նրանց, ում դուք համարում եք ազգերի համար հոգ տանող պատասխանատու կազմակերպություններ, դրանք, իրականում հենց այն խմբերն են, որոնք ղեկավարվում են հակաքրիստոսի կողմից:

Ազգերը, որոնց դուք չար եք համարում, զոհաբերվում են և օգտագործվում որպես զոհեր, որպեսզի դրա փոխարեն այդ ազգերը չար երևան արտաքին աշխարհին:

Միշտ չէ, որ պետք է հավատաք այն ամենին, ինչ ներկայացվում է արդարության անունից:

Սրտանց աղոթեք ձեր բոլոր եղբայրների և քույրերի համար, ովքեր ոտնակոխ կարվեն այդ մարդկանց կողմից:

Աղոթեք, որ Նախազգուշացումը հետաձգի նրանց գործողությունը, և աղոթեք՝ թուլացնելու համար **այն պլանի ազդեցությունը որը նախագծվում է ոչնչացնելու համար ձեր փողի, սննդի և քրիստոնեությունը և Իմ Հորը պատվող այլ կրոնները պրակտիկայում կիրառելու ձեր իրավունքները:**

Ձեր սիրող Հիսուս Քրիստոս

ՓՐկիչ մարդկության

Տասը եղջյուր ունեցող գազանը Եվրամիությունն է

Կիրակի, 19 փետրվարի, 2012թ, առավոտյան ժ 03:00

Իմ սիրելի աղջիկ, դու չպետք է վախենաս այս պատգամներից:

Քանի որ դրանք տրվում են աշխարհին, այն սիրո պատճառով, որը Ես ունեմ ողջ մարդկության հանդեպ:

Գալիք իրադարձությունների մասին իմանալը կօգնի Իմ զավակներին նախաօատրաստվել, որպեսզի նրանք կարողանան պաշտպանել ճշմարտությունը:

Իմ նախազգուշացումները կարող են օգնել դարձ տարածելու և հնարավորություն կտան Իմ զավակներին մեկ անգամ ևս ընդունել/ճանաչել ետ գալու Իմ խոստումը:

Իմ Երկրորդ Գալուստը տեղի կունենա ձեր կյանքի ընթացքում, զավակներս:

Դուք, այս ընտրված սերնդից, կհնձեք երկրի վրա Իմ Փառահեղ Թագավորման հրաշքները:

Ձեր մեջ , Իմ ընտրյալ զավակներ, Ես ներառում են նրանց, ովքեր իրենց մեջքն են շրջել Իմ հանդեպ և ժխտում են Իմ Սիրելի Հոր՝ Ամենաբարձրյալ Աստծո գոյությունը:

Իմ սերը կպարուրի նրանց, ովքեր արհամարհում են Ինձ: Ժամանակի ընթացքում նրանք դարձի կգան:

Քեզ՝ վերջին ժամանակների Իմ մարգարեին ճանաչելը, **ում տրված է յոթը կնիքները բացելու պատասխանատվությունը,** բավական չի լինի:

Կարևորը աշխարհում ձեր բոլոր եղբայրների և քույրերի փրկությունն է:

Երկու դաշնակիցները՝ Ռուսաստանը և Չինաստանը, կմիավորեն ուժերը: Սա տեղի կունենա մինչ տասը եղջյուր ունեցող գազանը բարձրանում է՝ իշխելու համար նրանց երկար տառապած ժողովրդին:

Տասը եղջյուր ունեցող գազանը Եվրամիությունն է, աղջիկս, որը Հայտնության Գրքում նշված է Բաբելոն:

Բաբելոնը կընկնի և նրան կիշխեն **մեծ Կարմիր Վիշապը՝ Չինաստանը և նրա դաշնակից Արջը՝ Ռուսաստանը:**

Երբ դա տեղի ունենա, **կոմունիզմը կկառավարի,** և վայ նրան, ում կտեսնեն իրենց կրոնական հավատալիքները պրակտիկայում գործածելիս նրանց ներկայությամբ:

Կրոնն ամբողջությամբ կարգելվի, սակայն քրիստոնյաներն ամենաշատը կտառապեն հալածանքից:

Հռոմեական կաթոլիկներին ընդհանրապես չեն հանդուրժի և նրանք ստիպված կլինեն գաղտնի կերպով կատարել իրենց պատարագները:

Եկել է ժամանակը, զավակներս, Իմ բոլոր հետևորդների համար, որ սկսեն պլնավորել իրենց ապագան:

Ես միշտ կառաջնորդեմ ձեզ:

Սկսեք հիմա պլանավորել, որովհետև ձեզ ժամանակ կտրվի դա անել:

Նորից, Ես ասում եմ ձեզ, աղոթքը, շատ ղոթքը, կթուլացնի Գազանի, Արջի և Կարմիր Վիշապի զորությունը:

Նրանք կկառավարեն շատ կարճ ժամանակ: Քանի որ դրանից հետո նրանք կոչնչացվեն:

Ձեր սիրող Փրկիչ

Մարդկության Ազատարար

Հիսուս Քրիստոս

Հայր Աստված. Բարձրացեք հիմա և ընդունեք Իմ Կնիքը՝ Կենդանի Աստծո Կնիքը

Երկուշաբթի, 20 փետրվարի, 2012թ. գիշերվա ժ 12:20

Իմ սիրելի աղջիկ, Իմ սիրտը վշտից ծանրացած է Իմ զավակների մեղքերից:

Ինչպես ցանկացած սիրող Հոր համար, նրանց չար ատելությունը միմյանց հանդեպ երկու մասի է բաժանում Իմ սիրտը:

Դա նման է մի սրի, որը ծակում է Իմ սիրտը և դուրս չի գալիս:

Ես Ամենաբարձրյալ Աստվածն եմ, ով ստիպված է տառապել այն ազատ կամքի համար, որը Ես Ինքս եմ տվել Իմ բոլոր զավակներին, կրելով ցավ, մինչև երկրի վրա Նոր Դրախտը հայտնվի:

Այդ ժամանակ դուք, զավակներս, կմիանաք միասնության մեջ Իմ Սուրբ Կամքի հետ:

Մինչև դա տեղի չունենա, երկրի վրա խաղաղություն չի լինի:

Միայն այն ժամանակ, երբ չարը և նրանք, ովքեր ստրկաբար հետևում են նրա խոստացած ստերին, վերջանկանապես կոչնչացվեն, միայն այդ ժամանակ աշխարհը կարող է հանդարտվել:

Աղջիկս, ասա Իմ զավակներին, որ Ես հաճույք չեմ ստանում Իմ զավակներին պատժելու մտքերից, քանի որ Ես սիրում եմ նրանց:

Նրանք Իմն են, Իմ փայփարած արարչությունը: Ինձ՝ նրանց Սիրող Հոր համար հարատև տառապանք է տեսնել, թե ինչպես է չարը քայքայել նրանց հոգիները:

Ես ցանկանում եմ տանել ձեզ բոլորիդ, սիրող զավակներ, ովքեր ճանաչում և հասկանում են ձեր հանդեպ Իմ սերը, երկրի վրա Իմ Նոր գեղեցիկ Դրախտ:

Ես խոստանում եմ ձեզ, որ հալածանքը արագ կլինի, և որ դուք պաշտպանված կլինեք:

Քանի որ Ես հիմա կտակում եմ Իմ Սիրո և Պաշտպանության Կնիքը:

Սրանով դուք **կխուսափեք նրանց ուշադրությունից, ովքեր դժբախտություններ կբերեն** ձեր երկրների վրա:

Իմ Կնիքը Փրկության Իմ խոստումն է: Իմ զորությունը ներս կմտնի ձեր միջով այդ կնիքի հետ, և ձեզ ոչ մի վնաս չի լինի:

Սա մի հրաշք է, զավակներս, և միայն նրանք, ովքեր ցած են խոնարհվում Իմ՝ իրենց Տիրոջ և ամեն բանի Արարչի առջև փոքր երեխաների պես, իրենց սրտերում Իմ հանդեպ սիրով, միայն նրանք կարող են օրհնվել այս աստվածային ընծայով:

Բարձրացեք հիմա և ընդունեք Իմ Կնիքը՝ Կենդանի Աստծո Կնիքը:

Ասացեք այս խաչակրաց արշավանքի աղոթքը (33) Իմ Կնիքը ճանաչելու և այն սիրով ու երախտագիտությամբ ընդունելու համար:

Ով Աստված իմ, Իմ սիրող Հայր

Ես սիրով և երախտագիտությամբ ընդունում եմ

Պաշտպանության Քո Աստվածային Կնիքը

Քո Աստվածայնությունը ներառում է իմ մարմինն ու հոգին հավերժությունը

Ես խոնարհվում եմ խոնարհ շնորհակալությամբ և առաջարկում Քեզ իմ խորը սերն ու հավատարմությունը

Քեզ՝ իմ Սիրելի Հայր,

Ես խնդրում եմ Քեզ պաշտպանել ինձ և իմ սիրելիներին այդ հատուկ Կնիքով

Եվ ես իմ կյանքն եմ նվիրում Քո ծառայությանն ընդմիշտ

Ես սիրում եմ Քեզ սիրելի Հայր

Ես սփոփում եմ Քեզ այս ժամանակներում սիրելի Հայր,

Ես առաջարկում եմ Քեզ Քո սիրելի Որդու Մարմինը, Արյունը, Հոգին և Աստվածայնությունը

Աշխարհի մեղքերի քավության և Քո բոլոր զավակների փրկության համար:

Ամեն:

Գնացեք, զավակներս, և մի վախեցեք: Վստահեք Ինձ՝ ձեր սիրող Հորը, ով սիրով ստեղծեց ձեզնից յուրաքանչյուրին:

Ես ճանաչում եմ յուրաքանչյուր հոգու, ձեր յուրաքանչյուր մասը ծանոթ է Ինձ: Ձեզնից ոչ մեկն ավելի քիչ սիրված չէ մյուսից:

Այդ պատճառով Ես չեմ ցանկանում կորցնել ոչ մի հոգու: Ոչ մի հոգու:

Խնդրում եմ շարունակեք աղոթել Իմ Աստվածային Գթասրտության աղոթքն ամեն օր:

Մի օր դուք կհասկանաք, թե ինչու է այս մաքրագործումն անհրաժեշտ:

Ձեր սիրող Երկնավոր Հայր

Ամենաբարձրյալ Աստված

Հայր Աստված. Դուք կամ Իմ կողմից եք, կամ Իմ դեմ եք

Երեքշաբթի, 21 փետրվարի, 2012թ, գիշերվա 12:30

Ես Հայր Աստվածն եմ՝ ամեն բանի Արարիչը: Ես քեզ հետ այս գիշեր խոսում եմ Սուրբ Երրորդության անունից:

Աղջիկս, եկել է ժամանակը **կոտրելու առաջին կնիքը,** և որքան է դա Ինձ տխրեցնում:

Ես խոստացել եմ, որ նախքան դա տեղի կունենա, **Ես կառաջարկեմ Իմ Պաշտպանության Կնիքը բոլոր նրանց ճակատներին, ովքեր հավատում են Ինձ:**

Հիմա, զավակներս, Ես վերջին հնարավորություն եմ տալիս ձեզ կանգնելու և որոշելու:

Դուք կամ Իմ կողմից եք, կամ Ինձ դեմ եք: Ընտրությունը ձերն է:

Նրանք, ովքեր մերժում են Իմ այս վերջին ժամանակների մարգարեին տրվող Իմ խոսքը, դուք պետք է լսեք Ինձ հիմա, մինչ Ես խոսում եմ:

Ես տալսի եմ ձեզ մարգարեներ, որ ուղղություն տան ձեզ:

Ինչու՞ եք դուք մերժում Իմ սերը:

Ինչու՞ եք թույլ տալիս, որ կասկածները կուրացնեն ձեզ ճշմարտության հանդեպ:

Որքան էլ որ Ես ձեզ շատ եմ սիրում, քիչ ժամանակ է մնացել, **և ձեզ վայրկյաններ կտրվեն ձեր սեփական ճակատագիրը որոշելու համար:** Քանի որ ժամանակի հետ Իմ համբերությունը կսպառվի:

Անտեսեք Իմ կանչը, և ձեզ համար չափազանց դժվար կլինի գտնել Ինձ առջևում սպասվող անապատում:

Եթե ընդունեք Իմ Սիրո Կնիքը, դուք կլինեք Իմ պաշտպանության ներքո միշտ:

Այս պաշտպանությունը կծածկի ձեր ընտանիքներին:

Սա է Իմ վերջին կանչը՝ առաջարկելու համար ձեզ Իմ Սիրո Կնիքը:

Սրանից հետո դուք ստիպված կլինեք անպաշտպան և առանց հենարանի կանգնել Մեծ Դժբախտությանը հաղնիման:

Ես երբեք չեմ պարտադրի ձեզ, զավակներս, որ սիրեք Ինձ: Սա ձեր սեփական ընտրությունն է, և իհարկե, սերը կարող է միայն գալ սրտից:

Ես երկարում եմ սիրո Իմ ձեռքը հիմա: Ես գիտեք Ինձ՝ կճանաչեք Ինձ:

Եթե ասում եք, թե գիտեք Ինձ, բայց մերժում եք սիրո և պաշտպանության Իմ ժեստը, **ուրեմն դուք իրականում ընդհանրապես չեք ճանաչում Ինձ:**

Զավակներս, մոտ մնացեք Ինձ հիմա, քանի որ **առաջին կնիքը վերջապես բացվել է:**

Երկիրը կցնցվի ամբողջապես աշխարհի տարբեր մասերում, և այդ ժամանակ դուք կասկածներ չեք ունենա:

Քանի որ Ես սիրում եմ ձեզ, Ես կսպասեմ ձեր պատասխանին դրանից հետո:

Երբեք մի մերժեք Իմ մարգարեներին, քանի որ դուք Ինձ եք մերժում:

Վնասեք և զրպարտեք Իմ մարգարեներին, և դուք նույնը կանեք Իմ հանդեպ:

Քանի որ դուք վիրավորում եք Երկնքից եկող Իմ ձայնը:

Շատա վելի լավ կլինի, եթե ընդհանրապես չխոսեք և լուռ մնաք եթե կասկածում եք:

ՀԻմա ժամանակն է, որ մարգարեություններն ապացուցվեն:

Շատերը ծնկի կգան ամոթով և ափսոսանքով, երբ տեսնեն, թե ինչպես է Իմ վերջին ժամանակների մարգարեին տրված Իմ պատգամների մերժումը Ինձ երկու մասի բաժանել:

ԹԵ ինչպես են նրանց արհամարհանքն ու ծաղրը ծաղրուծանակի ենթարկել Իմ Սուրբ խոսքը:

ԹԵ ինչպես էր ճշմարտությունը չափազանց դառը իրոնց համար, որ կուլ տային, և թե ինչպես էին կեղծ մարգարեների և բախտագուշակների ստերը տալիս նրանց իրենց փնտրած ծանծաղ հարմարավետությունը:

Որքան են Իմ զավակները հեռացել Ինձնից:

Որքան անշնորհակալ են նրանք:

Նրանք, ովքեր ճանաչում են Ինձ և ընդունում Իմ Կնիքը, իմացեք, որ դուք հավիտենական կյանք կունենաք:

Դուք երբեք չկասկածեցիք Իմ Խոսքին, որովհետև Իմ հանդեպ ունեցած ձեր խոնարհությունն ու մանկան հավատը նշանակում են, որ դուք թույլ չեք տվել , որ ինտելեկտուալ մտածողությունը փակի ձեր ականջները ճշմարտության հանդեպ:

Վերջին քսան տարիների ընթացքում Իմ կողմից ձեզ ուղարկված Իմ այնքան ճշմարիտ մարգարեներ են ծաղրի ենթարկվել, մեղադրվել, տառապել և նետվել ամայության մեջ:

Ձեզանից նրանք, ովքեր զրպարտել են Իմ պատգամները, դուք պետք է ամաչեք:

Չնայած դրան, դուք կուռք դարձրեցիք կեղծ մարգարեներին և խոնարհվեցիք նրանց առջև:

Ձեզ Ես հարցնում եմ. Ո՞ր Աստծո առջև եք խոնարհվում:

Դուք գիտեք, թե դուք ովքեր եք: Եկել է ժամանակը, որ կանգնեք ճշմարտության առջև:

Քանի որ դուք կամ Իմ կողմից եք, կամ՝ Իմ դեմ եք: Եթե չեք կարողանում ճանաչել Ինձ, ուրեմն կորած եք:

Նրանց, ովքեր լսում են Իմ ձայնը, հետևեք Ինձ և օգնեք Ինձ կառուցելու երկրի վրա Իմ մնացորդ եկեղեցին:

Ես կառաջնորդեմ ձեզ այն ավերածության միջով, որը կստեծվի հակաքրիստոսի կողմից:

Դուք չեք տառապի այն տառապանքով, որը կիջնի նրանց վրա, ովքեր չեն ցանկանում մերժել կեղծ կուռքերին, ագահությանը, նյութապաշտությանը և հզորության մոլուցքին:

Ես կոչ եմ անում Իմ բոլոր զավակներին՝ լսել:

Ես խնդրում եմ ձեզ բացել ձեր աչքերը քանի դեռ չափազանց ուշ չէ:

Փեր Սիրող Հայր

Աստված Ամենաբարձրյալ

Ինչու՞ եք մերժում Իմ նախազգուշացումները՝ նախապատրաստվելու Իմ Երկրորդ Գալուստի համար

Երեքշաբթի, 21 փետրվարի, 2012թ, երեկոյան ժ 07:45

Իմ սիրելի աղջիկ, որքան ես դու տառապում հանուն Ինձ և Իմ Սիրելի Հոր

Դու պետք է ուժեղ լինես, քանի որ **այս պատգամները վիրավորանք կառաջացնեն** որոշ մասերում, չնայած ուրիշ հոգիների էլ կոգեշնչեն և զորություն կտան:

Իմ Սուրբ Խոսքը մերժվեց ուսյալների կողմից, երբ Ես երկրի վրա էի:

Քահանաներն ու նրանք, ովքեր սուրբ մարդիկ էին համարվում, **մերժեցին Ինձ որպես խարդախի:**

Ձեզանից նրանք, ովքեր ասում են, թե Իմ հանդեպ ցուցաբերված վերաբերմունքը բարբարոսային էր, ճիշտ են:

Այդ օրերում ապրող մարդիկ կրթված չէին, կոպիտ էին և չար:

Որ նրանց վերաբերմունքը Իմ՝ իրենց սիրող Փրկչի հանդեպ, դաժան էր:

Ոմանք կասեն, թե նրանք անգրագետ էին և ոչինչ չգիտեին Սուրբ Գրքերի մասին: Բայց դա ճիշտ չէ: Որովհետև այսօր աշխարհում ապրողները, չնայած ավելի կրթված և զարգացած են, նրանցից տարբեր չեն:

Նրանք, ովքեր ամբողջապես գիտեն Սուրբ Աստվածաշունչը, և ձեր կարծիքով պետք է զգոն լինեն նրանում պարունակվող ուսուցումների հանդեպ, կույր են ճշմարտության հանդեպ:

Իմ Հոր Գրքի իրենց ողջ հասկացողությամբ հանդերձ, նրանք չեն կարողացել նախապատրաստվել այն ժամանակի համար, երբ Ես նորից կգամ:

Նրանց կարծիքով ե՞րբ է լինելու այդ ժամանակը:

Երկրի վրա Իմ Երկրորդ Գալուստի ժամանակը շատ է մոտեցել:

Սակայն մարդկությունը չի նախապատրաստվել Իմ գալուստին:

Նույնիսկ Իմ սրբազան սպասավորները չեն քարոզում այս ամենափառապանծ իրադարձության կարևորությունը: Ինչու՞ է այդպես:

Մի՞թե դուք ոչինչ չեք սովորել: Ես ի՞նչ պետք է անեմ:

Ձեր կարծիքով Ես ե՞րբ եմ գալու, և ինչու՞ եք կարծում, թե այդ ժամանակը մոտ չէ:

Ի՞նչն է կուրացնում ձեզ և փակում ձեր ականջները լսելու Իմ ձայնը:

Ցած զցեք ոսկու, արծաթի և հարստության ձեր թիկնոցը և ընդունեք, որ դուք ոչինչ եք առանց Ինձ:

Առանց Իմ շնորհների դուք չեք կարող նախապատրաստել ձեր հոգիները Իմ փառահեղ վերադարձի համար:

Իմ սիրելի Հայրը միշտ մարգարեներ է ուղարկում Իր զավակներին նախապատրաստելու համար:: Նա անում է այդ ժամանակների սկզբից ի վեր:

Ուրեմն ինչու՞ եք մերժում Իմ նախազգուշացումները Իմ Երկրորդ Գալուստի համար:

Ես աղերսում եմ ձեզ, որ լսեք Ինձ:

Ես չեմ կարող ձեզ հրամայել, որ լսեք, քանի որ ձեզ տրվել է ազատ կամքի ընծան:

Ես երբեք չեմ կարող ստիպել ձեզ կամ հրամայել ձեզ գործել: Քանի որ դա անհնարին է:

Իմ Հայրը երբեք չի միջամտի ձեր ազատ կամքին:

Սակայն Նա երբեք չի տատանվի նախազգուշացնել ձեզ, ուղղություն տալ ձեզ և հեղեղել ձեր հոգիները շնորհներով՝ ձեզ ուժեղ դարձնելու համար:

Նրանք, ովքեր բաց են սրտով, Նա կտա նրանց Սուրբ Հոգու ընծան:

Նրանք, ովքեր մեղավոր են հպարտության, կրոնական սնոբիզմի և ամբարտավանության մեջ, նրանց համար հնարավոր չի լինի բացել իրենց սրտերը, որովհետև նրանց պակասում է ամենակարևոր հատկանիշը՝ խոնարհությունը:

Առանց խոնարհության և սրտի առատաձեռնության դուք չեք կարող մոտենալ Իմ Սուրբ Սրտին:

Եկեք Ինձ մոտ, զավակներս: Թույլ տվեք Ինձ վերցնել ձեզ Իմ հոտի մեջ, որպեսզի, ինչպես մի լավ հովիվ, Ես կարողանամ առաջնորդել ձեզ դեպի ապահովություն:

Ձեր Հիսուս

Մարդկության Ազատարար

Ծոմապահությունը կարևոր է ձեր հոգիների համար

Չորեքշաբթի, 22 փետրվարի, 2012թ, երեկոյան ժ 07:00

Պատգամ տրված Մարիա Աստվածային Գթաստրութանը Սուրբ Հաղորդության պաշտամունքի ժամանակ

Իմ սիրելի աղջիկ, ասա Իմ զավակներին, որ **Պահքի այս ժամանակը հանդարտ մտահայեցության ժամանակ է,** անձնական զոհաբերության ժամանակ, և աշխարհում պատերազմի մեղմացման համար աղոթելու հնարավորություն:

Հետևեք անապատում Իմ ծոմապահությանը՝ փոքր զոհաբերություններ կատարելով:

Ծոմապահությունը կարևոր է ձեր հոգիների համար: Այն մաքրագործում է ոգին և Ինձ մեծ հանգստություն պատճառում:

Շաբաթական մեկ անգամ ծոմ պահելով կարող եք բազմաթիվ հոգիներ փրկել:

Դա կարող է լինել ըստ ձեր ցանկության: Կարևորն այն է, որ դուք առաջարկեք այդ օրը հոգիների համար:

Օգտագործեք այս ժամանակը՝ օգնելու համար Ինձ՝ **հոգիների համար մղվող Իմ մարտում:**

Մտածեք երկրի վրա Իմ կյանքի մասին և այն ընծայի մասին, որը Ես հեղեցի խաչի վրա Իմ մահվամբ, որպեսզի Իմ բոլոր զավակներին ապահովեմ Հավիտենական Կյանքով:

Պահքի այս մի քանի շաբաթը պետք է օգտագործվի նախապատրաստելու համար ձեր և ձեր եղբայրների ու քույրերի հոգիները:

Խնդրում եմ նախապատրաստվեք Սուրբ /Ավագ շաբաթվան և Զատիկին՝ ասելով **խաչակրաց արշավանքի այս աղոթքը (34) պահեցողության Իմ ընծան Հիսուսին**

Ով իմ Հիսուս

Օգնիր ինձ իմ փոքր ձևով

Ընդօրինակել զոհաբերության Քո կյանքը՝ մարդկությանը փրկելու համար:

Թույլ տուր ինձ առաջարկել Քեզ պահեցողության իմ ընծան շաբաթական մեկ օր

Պահքի շրջանում, փրկելու համար ողջ մարդկությանը, որպեսզի նրանք կարողանան

Ներս մտնել Երկրի վրա Նոր Դրախտի դարպասներից:

Ես առաջարկում եմ Քեզ, սիրելի Հիսուս, իմ զոհաբերությունը

Սիրով և ուրախությամբ իմ սրտում, քեզ ցույց տալու համար իմ սիրո չափը,

Այս զոհաբերության միջոցով ես խնդրում եմ Քեզնից ամեն մի հոգու փրկությունը

Ով կարող է շնորհի վիճակից ընկած լինել:

Ամեն:

Թույլ մի տվեք, որ վախը ստվերի հավիտենական փրկության ձեր հույսը, զավակներս: Մաքրագործումն արագ կլինի:

Դուք, Իմ հետևորդներ, ովքեր ընդունում եք Կենդանի Աստծո Կնիքը, օնհնյալ եք:

Դուք չպետք է անհանգստանաք:

Դուք պետք է ուժեղ լինեք:

Դուք պետք է լինեք հույսով լի և ձեր ուշադրությունը միշտ Ինձ վրա սևեռած:

Միայն այդ ժամանակ դուք ոտքի կկանգնեք և կքայլեք փշոտ ճանապարհով առանց տատանվելու:

Ես կառաջնորդեմ և ուղղություն կտամ ձեր ճամփորդության յուրաքանչյուր քայլը ճանապարհի ընթացքում:

Ձեր սիրող Հիսուս

Կույս Մարիամ. Աղոթեք, որ միջուկային պատերազմն Իրանում կասեցվի

Հինգշաբթի, 23 փետրավրի, 2012թ, ցերեկվա ժ 04:00

Զավակս, ժամանակն է, որ Իմ զավակները միանան որպես մեկ՝ հարգանքով Իմ թանկագին Որդու հանդեպ, որպեսզի Իրանում կասեցվի միջուկային պատերազմը:

Այս պատերազմը շատ մոտ է, և պետք է սրտանց աղոթեք այն կանգնեցնելու համար, **որովհետև այն կսպանի Աստծո միլիոնավոր զավակների:**

Սատանան և նրա չարքերն աշխատում են սարսափելի ավերածություն պատճառել:

Եթե նրանք սպանեն հոգիներին նախքան այդ հոգիներին հնարավորություն կտրվի ազատագրվելու Իմ Որդու աչքում, ապա այդ հոգիները կկորչեն:

Սա է չարի պլանը:

Նա այնքան շատ հոգիների է փնտրում՝ արգելելու համար նրանց մտնել Իմ Հոր Թագավորություն:

Իմ Սուրբ Վանդանանը կարող է, եթե բոլոր առեղծվածներն ասվեն մեկ աղոթքով, կանխել պատերազմը, զավակներս:

Միավորվեք հիմա մեկ օր և **աղոթեք Իմ Սուրբ Վարդարանը՝ կանգնեցնելու համար միջուկային պատերազմը,** որը հիմա պլանավորվում է:

Աղոթեք այդ խեղճ հոգիների համար, ոչ միայն նրանց, ովքեր Իրանում են, այլև այն երկրներում, որոնք ակամա կխառնվեն դրան:

Աղոթեք նաև այն խեղճ հոգիների համար, որոնք օգտագործվում են որպես գործիք ստերի չար խաղում այն խմբերի կողմից, որոնք Աստծուց՝ Իմ Հավիտենական Հորից չեն գալիս:

Գնացեք հիմա, զավակներս և միավորեք Իմ բոլոր զավակներին՝ աղոթելու, որպեսզի խուսափեք մարդկության դեմ պլանավորվող այս մեծ ոճրագործությունից:

Ձեր սիրող Մայր

Մայր Փրկության

Հայր Աստված. Կոչ կաթոլիկ եկեղեցուն՝ ընդունելու երկրի վրա խաղաղության նոր դարաշրջանը

Հինգշաբթի, 23 փետրվարի, 2012թ, ցերեկվա ժ. 04:42

Ես Աստվածն եմ՝ Ամենակարող Հայրը, ամեն բանի Արարիչը, Ամենաբարձրյալ Աստված

Աղջիկս, կարևոր է, որ **նրանք, ովքեր հետևում են հռոմեական կաթոլիկ եկեղեցու ուսուցումներին, ընդունեն հազարամյակը /հազարամյան/, ինչպես խոստացվել է Իմ բոլոր զավակներին:**

Իմ Սուրբ Խոսքում՝ Սուրբ Աստվածաշնչում պարունակվող բառերը չեն ստում:

Իմ խոստումը պարունակվում է Գործք Առաքելոցի մեջ:

Հովհաննես Ավետարանչին նույնպես ասվել է Իմ սիրելի Որդու փառահեղ վերադարձի մասին, երբ Նա կթագավորի Խաղաղության Նոր Դարաշրջանում 1.000 տարի:

Ինչու՞ նրանք, ովքեր ասում են, թե հասկանում են Իմ Սուրբ Խոսքը, **մերժում են ընդունել դրա մի մասը, այլ ոչ թե մյուսը:**

Իմ այդ սրբազան սպասավորներին Ես հիմա ասում եմ, որ բացեն Ճշմարտության Գիրքը:

Դուք պարտավորություն ունեք ճշմարտությունը հռչակելու:

Դուք չպետք է լսեք ձեր շարքերից նրանց, ովքեր շրջում են ճշմարտությունը՝ **Երկրի վրա Խաղաղության Նոր Դարաշրջանի վերաբերյալ:**

Ի՞նչն է դրդում հռոմեական կաթոլիկ եկեղեցու ձեր եղբայրներին մերժել ճշմարտությունը:

Դուք շփոթության մեջ եք, զավակներս:

Միակ ճշմարիտ եկեղեցու՝ հռոմեական կաթոլիկ եկեղեցու հանդեպ ունեցած հավատարմության պատճառով դուք զրկում եք նրանց Երկրի վրա Նոր Դրախտում Իմ Որդու թագավորության համար իրենց հոգիները նախապատրաստելու հնարավորությունից:

Ձեր պարտականությունն է տեղեկացնել Իմ զավակներին ճշմարտությունը:

Իմ զավակներին. Դուք երբեք չպետք է մերժեք Սուրբ Աստվածաշնչում պարունակվող ճշմարտությունը, ուր պարունակվում է ճշմարիտ խոսքը:

Դուք, զավակներս, պետք է ընդունեք մեռածներից Փառապանծ Հարություն առնելուց հետո **Իմ Որդու կողմից տրված խոստումը:**

Նա ասաց, որ Ինքը նորից կգա:

Այդ ժամանակը, երկրի վրա Իմ Սիրելի Որդու Երկրորդ Գալուստի ժամանակը, մոտենում է:

Եթե հավատում եք Իմ Որդու տված խոստումներին, ապա կիմանաք, որ Նա ի նկատի ունի այն, ինչ ասել է:

Երբ Նա նորից գա, **Նա գալու է թագավորելու և իրավամբ Իրեն պատկանող գահը վերցնելու համար** Նոր Դրախտի մեջ, որը Ես ստեղծել եմ երկրի վրա ձեզ բոլորիդ համար:

Երբեք մի կասկածեք Իմ Որդի Հիսուս Քրիստոսի Աստվածային շուրթերից եկող բառերին:

Իմացեք, որ Ես՝ ձեր սիրող Հայրը, ցանկանում եմ, որ բոլորդ միավորվեք որպես մեկ ընտանիք Իմ Որդու հետ Դրախտի մեջ:

Ընդունեք ճշմարտությունը: Մի շրջեք այն, ոչ էլ հարմարեցրեք ճշմարտության ձեր ծանծաղ մեկնաբանություններին:

Ես ճշմարատությունն եմ:

Դուք չեք կարող փոխել Ինձ, ոչ էլ այն, ինչ Ես եմ:

Ճշմարտությունը ձեզ ազատ կարձակի:

Ձեր սիրող Հայր

Ամենաբարձրյալ Աստված

Ոչ մահ կլինի, ոչ հիվանդություն, ոչ մեղք Նոր Դրախտում

Ուրբաթ, 24 փետրվարի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, դու երբեք չպետք է մոռանաս, որ չնայած մարդկությանը տրվող Իմ խիստ նախազգուշացումներին, Ես մի յուրահատուկ սեր ունեմ Իմ սրտում Իմ բոլոր զավակների հանդեպ:

Անհրաժեշտ է մաքրագործել երկիրը հիմա, քանի որ եթե Ես հիմա վերադառնայի, այն ինձ համար հարմար չէր լինի, որ Ես քայլեի նրա վրայով:

Երբ մարդկությունը մաքրագործվի, միայն նրանք, ովքեր Իմ և Իմ Հավիտենական Հոր հանդեպ մաքուր սեր ունեն, նրանք կմնան:

Իմ ընտրյալ սերունդը Ինձ հետ կլինի հավիտյան: **Այդ Դրախտը կառաջարկի 1000 տարվա խաղաղություն, սեր և ներդաշնակություն:**

Այդ ժամանակահատվածից հետո **տեղի կունենա մեռածների երկրորդ հարությունը:**

Միայն այդ ժամանակ հավիտենական կյանքը կառաջարկվի այն հոգիներին, որոնց մեջ փայլում է Աստծո լույսը:

Ինչու՞ ես տատանվում, աղջիկս, մի՞թե չգիտես, որ այդ մարգարեությունները կանխասացվել են:

Թող ոչ մի մարդ սխալ չհասկանա: Դուք, ա յս սերնդի զավակներ, ձեզ կտրվի այդ Դրախտում ապրելու ընծան, որը նույնիսկ ավելի գեղեցիկ է, քան այն, ինչ նախապատրաստվել էր Ադամի և Եվայի համար:

Տարիք գոյություն չի ունենա, իսկ մարդիկ խաղաղության մեջ կապրեն սերունեդներով ընտանիքների մեջ:

Այնքան շատ սեր և ուրախություն կլինի ամեն օր: Վերջապես ձեզ կտրվի ճշմարիտ հարատև խաղաղություն ձեր հոգիների մեջ:

Ինչու՞ սա չպետք է հնարավոր լինի: Սա այն երկիրն է, որը նախատեսված էր **Իմ Հոր կողմից, ում Աստվածային Կամքը վերջապես կիրականանա երկրի վրա, ինչպես Երկնքում է:**

Ուրախացեք, բոլորդ: Նոր Դրախտը պետք է ողջունեք ուրխությամբ և ակնկալիքներով:

Մահ չի լինի: Հիվանդություն չի լինի: Մեղք չի լինի: Ձեզ կտրվի հավիտենական երջանկության ընծան:

Աղոթեք նրանց համար, ովքեր մեղքով և անհնազանդությամբ գրավ կդնեն իրավամբ իրենց պատկանող ժառանգությունն ընդունելը, որ նախատեվել է Իմ Հավիտենական Հոր կողմից ժամանակների սկզբից ի վեր:

Ձեր սիրող Հիսուս

Երբեք մի մերժեք Տիրոջ մարգարեներին

Ուրբաթ, 24 փետրվարի, 2012թ. երեկոյան ժ 09:45

Աղջիկս, պարտադիր է, որ դու լուռ մնաս, երբ հալածանքը սկսվի:

Իմ Հավիտենական Հոր Սուրբ Խոսքը կմերժվի հենց այն սրբազան սպասավորների կողմից, ովքեր հայտարարում են, թե հոչակում են Նրա Ամենասուրբ Խոսքի մասին ճշմարտությունը:

Կաթոլիկ եկեղեցին միակ ճշմարիտ եկեղեցին է:

Բոլոր եկեղեցիները կմիավորվեն՝ դառնալու համար մեկ Սուրբ և Առաքելական եկեղեցի Իմ Երկրորդ Գալուստի ժամանակ:

Մինչև դա տեղի չունենա, Իմ Հոր կողմից հոգևորապես չարացած աշխարհին տրվող յուրաքանչյուր խոսք կամ կարհամարհվի, կվիճարկվի, կամ մոլեգնորեն կընդդիմանան դրան:

Նրանք, ովքեր մելեգնորեն կընդդիմանան քեզ՝ վերջին ժամանակների 7-րդ մարգարեին տրվող Իմ պատգամներին, կբաժանվեն երկու ճամբարի.

Սատանային հետևողներ՝ նոր դարի բախտագուշակության և կախարդանքի միջոցով;

Մյուսները կլինեն նրանք, ովքեր հոգևորապես կույր են , սակայն հավատում են, թե աստվածային ոգեշնչում ունեն Սուրբ Հոգու ընծայի միջոցով:

Երկու ճամբարն էլ կմերժի Սուրբ Երրորդության և Իմ սիրելի Մոր կողմից քո միջոցով տրվող Աստծո խոսքը:

Նույնիսկ բարի քահանաները, որոնց կարգելվի հրապարակայնորեն վավերացնել այս պատգամները, **կմտածեն, որ արդարացված է ամբողջ աշխարհին լսելու համար տրվող Իմ Սուրբ Խոսքի վատաբանումը:**

Իրենց սրտերի մեջ քիչ ճշմարիտ խոնարհությամբ նրանք կսկսեն թուլացնել Երկնքից տրվող այս կանչը, որը տրվում է մարդկությանը օգնելու համար:

Այդ քահանաները, հոգևորականները և այլ ինքնակոչ առաքյալներ, ովքեր հայտարարում են, թե ճանաչում են Ինձ, կփորձեն խրախուսել հոգիներին՝ մերժելու Իմ Խոսքը:

Նրանք ամոթ չունեն, քանի որ ամբարտավանորեն **կմասնատեն Իմ Ճշմարտության Գիրքը,** մինչ այն բացահայտվում է մարդկությանը:

Հետո նրանք ծվեն-ծվեն կանեն նրա բովանդակությունը իրենց սրտերի թույնով:

Նրանք չեն ցանկանում լսել ճշմարտությունը, քանի որ այն կխախտի և կանհանգստացնի կեղծ անվտանգության այն կոկոնը, որի մեջ նրանք փաթաթվել են:

Ոհ, որքան են նրանք վիրավորում Ինձ:

Որքան վնաս կտան նրանք, և չնայած դրան, չեն հասկանում այդ:

Աղոթեք, որ այդ հոգիները, որոնք խաբեբայի ազդեցությամբ կուրացել են ճշմարտության հանդեպ, բացեն իրենց սրտերը և ընդունեն Աստծո Խոսքն այնպես, ինչպես այն ներկայացվում է իրենց այսօր:

Նրանք իրավունք չունեն հրապարակայնորեն հեռացնել այս պատգամները, առանց դրանք մաքուր հոգով զանազանելու, որը պետք է խոնարհ լինի ամեն ինչում:

Չնայած Աստված թույլ է տալիս երկրի վրա Իր տեսանողներին տառապել, որպեսզի հոգիներ փրկվեն, նա թույլ չի տա, որ Իր օծյալ մարգարեներին վիրավորեն:

Դու, աղջիկս, մարգարե ես:

Դու ընդունում ես տառապանքը որպես Ինձ տրվող ընծա:

Բայց սա քո մասին չէ, քանի որ դու ոչինչ ես առանց Ինձ, և դու դա գիտես և ընդունում ես:

Աստված՝ Իմ Հայրը խոսում է աշխարհի հետ Իր մարգարեների միջոցով:

Նրա խոսքն եք դուք մերժում, երբ հրապարակայնորեն վիրավորում եք Նրա մարգարեներին:

Քանի որ դա մեղք է Նրա աչքում:

Երբեք մի մերժեք Տիրոջ մարգարեներին:

Երբեք ոչ մի ձևով մի վիրավորեք կամ վնասեք Նրա մարգարեներին:

Լուռ մանցեք միշտ, եթե կասկածում եք, և աղոթեք նրանց համար:

Հարձակվեք ճշմարիտ մարգարեի վրա, և Երկնքից Հոր Ձեռով որպես պատիժ կրակ կթափվի:

Ոչ մի մարդ չի կանգնեցնի Իր զավակներին տրվող Տիրոջ Խոսքը:

Սա է Իմ Հոր կողմից տրված խոստումը սկզբից ի վեր:

Լսեք Նրա ձայնը:

Ընդունեք, որ դուք գտնվում եք վերջին ժամանակներում:

Աղոթեք, որ այս պատգամները լսվեն, որպեսզի Աստծո բոլոր զավակները հավիտենական կյանք ունենան:

Ձեր Ուսուցիչ

Մարդկության Ազատարար

Հիսուս Քրիստոս

Հայր Աստված. Այն բալասանը, որի կարիքը դուք այնքան հուսահատորեն ունեք՝ հանգստացնելու համար ձեր հոգիները

Կիրակի, 26 փետրվարի, 2012թ, երեկոյան ժ. 09:45

Աղջիկս, Իմ այն զավակներին, ովքեր կանչված են հայտարարելու Իմ Սուրբ Խոսքը աշխարհին, որպեսզի երկիրը նախապատրաստեն Իմ Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին, Ես հետևյալն ունեմ ասելու.

Դուք, զավակներս, որ ճանաչում են Ինձ՝ ձեր սիրող Հորը, պետք է պայքարեք այն գայթակղությունների դեմ, որոնք դրվում են ձեր առջև օրվա յուրաքանչյուր պահի:

Դուք լցվել եք Սուրբ Հոգով 2011թ. մայիսի 10-ին Իմ Որդու կողմից աշխարհին տրված յուրահատուկ օրհնության միջոցով:

Դուք պետք է հասկանաք այն պարտավորությունները, որոնց դեմ հիմա կանգնած եք:

Քանի որ դուք միավորվում եք որպես մեկ բանակ, որը կկազմի երկրի վրա Իմ մնացորդ բանակի սկիզբը, դուք հարձակման կենթարկվեք ամեն կողմից:

Իմ՝ ձեր սիրող Հոր և Իմ թանկագին որդու՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր ունեցած հավատն ու հավատարմությունը փորձության կենթարկվեն ձեր կարողությունների սահմանից այն կողմ:

Հետևելով Իմ Որդուն, դուք ստիպված կլինեք կրելու Նրա խաչի ծանրությունը, և դա հեշտ չի լինի:

Դուք կլցվեք կասկածներով, ներքին տառապանքներով և փորձություններով և երբեմն, կցանկանաք ձեր մեջքը շրջել:

Շատերը, որոնց դուք վստահում եք, կփորձեն ձեզ հուսալքել:

Ձեզ կասեն, թե երևակայում եք, թե տառապում եք պատրանքներից, հետո ձեզ կծաղրեն, ծաղր ու ծանակի կենթարկեն և կմերժեն:

Նույնիսկ կզգաք, որ տեղի եք տալիս այն ստերին ու խաբեությանը, որոնք կտրվեն, համոզելու համար ձեզ՝ մերժելու այս պատգամները:

Ահռելի հավատ և արիություն կպահանջվի ձեր խաչը վերցնելու և հետևելու Իմ Որդուն՝ օգնելու նախապատրաստել մարդկությանը երկրի վրա Նրա Փառապանծ Վերադարձի համար:

Ձեզ կսխալեցնեն և թակարդներ կդնեն:

Երբեք չընկնեք մարդկանց դատելու թակարդը, եթե նրանք չընդունեն այս պատգամները:

Երբեք չկռվեք ուրիշի հետ՝ Իմ Սուրբ Խոսքը պաշտպանելիս:

Սիրեք միմյանց:

Համբերատար եղեք նրանց հանդեպ, ովքեր ոչ միայն ծաղրում և թերություններ են գտնու մայս պատգամներում, այլև նրանց հանդեպ ովքեր անձնական վիրավորանքներ են հեղում ձեզ վրա այս պատգամների պատճառով:

ԼՌԻՌ մանցեք: Համբերատար եղեք: Սեր ցույց տվեք նրանց հանդեպ, ովքեր խոսում են Իմ Անունից:

Երբեք դիմացինին չդատեք հանուն Ինձ, քանի որ դուք այդ իրավասությունը չունեք:

Երբեք դիմացինին չզրպարտեք հանուն Ինձ: Երբ դա անեք, կխախտեք Իմ Պատվիրանները:

Աղոթեք նրանց համար, ովքեր վիրավորում են ձեզ, նույնիսկ եթե հանուն Ինձ են վիրավորում:

Զավակներս, Ես կարիք ունեմ, որ դուք միավորվեք որպես մեկ:

Մի կողմ նետեք ձեր բոլոր անտարբերությունները:

Այն խեղճ հոգիները, ովքեր ձեր ուշադրության կարիքն ունեն, արդեն դարձի եկածները չեն, այլ նրանք, ովքեր ընդհանրապես չեն ճանաչում Ինձ:

Աղոթեք հիմա Իմ բոլոր զավակների համար, ովքեր ոչինչ չգիտեն Իմ մասին:

Աղոթեք նաև նրանց համար, ովքե ճանաչում են Ինձ, բայց մերժում են ընդունել Ինձ՝ իրենց Արարչին, իրենց Սիրող Հորը, ով քնքշորեն սիրում է նրանց:

Ես ցանկնում եմ միավորել Իմ բոլոր զավակներին:

Ես կոչ եմ անում ձեզ վայր դցել վախի, զայրույթի և անհամբերության բոլոր զենքերը և թույլ տաք Ինձ առաջնորդեն ձեզ դեպի Նոր Դրաձտ:

Այս ճամփորդությունը տառապալից կլինի, բայց այն սերն ու խաղաղությունը որոնք կգտնեք վերջում, կլինեն այն բալասանը, որի կարիքն այնքան զգում եք ձեր հոգիները հանգստացնելու համար:

Հանդարտությունը, զավակներս, կարևոր է:

Համբերությունն անհրաժեշտ է:

Սերը միմյանց հանդեպ, ներառյալ նրանց, ովքեր վնասում կամ վիրավորում են ձեզ, էական է՝ ներս մտնելու համար Իմ Սիրելի Որդու Թագավորություն Նոր Երկնքի և Նոր Երկրի Դրախտի մեջ, որը Ես խոստացել եմ ձեզ այնքան վաղուց:

Ձեր Սիրող Հայր

Աստված Ամենաբարձրյալ

Աշխարհը պատրաստվում է անցնել մաքրագործման հաջորդ փուլով

Ուրբաթ, 27 փետրվարի, 2012թ. ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, մինչ պառակտումն աշխարհում շարունակում է ավելանալ, Իմ Աստվածային Գթասրտության ժամանակը մոտենում է:

Մինչ պատերազմներն ու անհանգստությունը տարածվում են ամեն ուղղությամբ, Իմ եկեղեցու հավատը կշարունակի թուլանալ:

Հերձվածությունն Իմ եկեղեցում պատրաստ է արագորեն զարգանալու:

Քահանան՝ քահանայի դեմ:

Եպիսկոպոսը՝ եպիսկոպոսի դեմ:

Աշխարհը պատրաստվում է անցնել մաքրագործման հաջորդ էտապով:

Իմ Հոր հանդեպ զայրույթը ներս կմտնի աշխարհի յուրաքանչյուր երկիր:

Իմ հետևորդները հիմա տառապանք կզգան իրենց հավատի համար այնպիսի ձևով, որը նախկինում չեն զգացել:

Այդ խեղճ հոգիների կողմից զգացած ցավը արտացոլումն է այն ցավի, որը Ես կրում եմ հենց այժմ:

Ինձ հետ՝ իրենց սիրող Հիսուսի հետ բոլոր միության մեջ գտնվողները իրենց հոգիներում առանց կասկածի կիմանան, որ Իմ Սուրբ Հոգին հիմա նստած է իրենց մեջ:

Նրանք վայրկենապես կիմանան, երբ ականատես լինեն մեղքին իրենց շուրջը, և թե որքան է այն Ինձ ցավ պատճառում:

Երբ նրանք տեսնեն անմեղների դեմ սանձազերծված պատերազմներ, նրանք կզգան Իմ տառապանքները իրենց մարմինների յուրաքանչյուր ոսկրի մեջ:

Երբ նրանք տեսնեն աբորտի մեղքը ցուցադրաբար իրենց առջև ներկայացրած, ասես թե այն ոչ մի հետևանք չունի, նրանք կբացահայտեն Իմ ցավը:

Մեղքն ավելանում է: Իմ եկեղեցու հավատը նվազում է:

Իմ սրբազան սպասավորների հավատարմությունը թուլանում է:

Իմ սրբազան սպասավորները մերժում են հավատը, երբ Իմ հոտին ստեր են ասվում մեղքի կարևորության մասին:

Կան նաև Իմ սիրելի քահանաները, միանձնուհիներն ու հոգևորականները բոլոր կրանական հարանվանություններից, ովքեր հավատում են Ինձ և Իմ Հավիտենական Հորը, ովքեր կրում են ցավը՝ ականատես լինելով, թե ինչպես է մեղքը տարածվում հրդեհի պես, որը ամենուր կլանում է ազգերին կատաղի արագությամբ:

Որքան էլ սա դժվարին լինի, դուք պետք է ուժեղ մնաք և շարունակեք միացած մնալ Իմ անվամբ:

Հիմա աղոթք է անհրաժեշտ, և դուք պետք է օրական առնվազն մեկ ժամ տրամադրեք դրան, մեղմացնելու համար այն իրադարձությունները, որոնք հիմա կծավալվեն աշխարհում:

Քրիստոնեական եկեղեցիները թիրախ են աշխարհիկ խմբերի համար և չարչարանքի են ենթարկվում նրանց կողմից:

Նրանք կփորձեն ոչնչացնել ամեն ինչ, որը պատվում է Ինձ՝ իրենց Աստվածային Փրկիչ Հիսուս Քրիստոսին:

Նրանց հոգիներ լցվող ատելությունը կատարվում է սատանայի ձեռքով:

Աղոթեք, աղոթեք հիմա, որ այն հոգիները, ովքեր ցավ և տառապանք են պատճառում Աստծո զավակներին, կարողանան փրկվել:

Ձեր Հիսուս